

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ԿԱՐԵԼԻ ՊԻՏԻ
 ԴԱՌՆԱՅ Կ'ԸՍԷՔ,
 ՕՐԻՆԱԲՈՐՈՒԹԻՒՆԸ
 ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԱՐԴԱՐ ՈՒ
 ԹԱՓԱՆՑԻԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
 ՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՎ
 ՄԱՅԻՍ 12-ԻՆ**

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեկնելով 2003թ. նախագահական եւ երեսփոխանական ընտրութիւններուն արձանագրուած ապօրինութիւններէն, խախտումներէն, բռնարարներու ստեղծած բռնաւոր մթնոլորտէն, ահաբեկումներէն, ընտրակաշառփներու բարոյագրկող հանգամանակներէն, անբափանցիկ այլ փուլներու կասկածելի հաշուարկումներէն եւ մասնաւորապէս բոլոր այդ մեքենայութիւններու ստորադաս կամ իշխանաւոր հեղինակներուն անպատիժ մնալու ամօքալի մեծաշնորհումներէն՝ ԵԱՀԿ եւ ԺՄԻԳ-ի պատասխանատուները փորձեցին նոր հետնակարներ ուրուագծել Մայիսի 12-ին տեղի ունեցաւ ընտրութիւններու հորիզոնի վրայ: Անոնց ցանկութիւնն էր, վերականգնել Հայաստանի կորսնցուցած ժողովրդավարական վարկը միջազգային քաղաքական միջավայրում:

ԵԱՀԿ-ի եւ ԺՄԻԳ-ի, ժողովրդավարական Հաստատութիւններու եւ Մարդու Իրաւունքներու Գրասենեակի գեկուցագրի մէջ օրին կարդացած էինք, թէ «Մայիսի 12-ին ընտրութիւնները Հայաստանի մէջ ժողովրդավարական յառաջընթացի կարեւոր ցուցանիշ պիտի դառնան»: Այս հաստատումը ենթադրել կու տար մեզի, թէ նախաձեռնութիւններ պիտի ընդնունուին կիրարկելու համար օրինակաւորութիւնը, փոխադրամիջոցներու ապահովութիւնը, ընտրելու ազատութիւնը, ընտրական օրինակելի գործընթաց մը:

Այս հաստատումը, նոյնպէս, հետեւութիւններ ընել կու տար մեզի, թէ պիտի արգիլուին խտրական գործընթացները: Պիտի ապահովուի մամուլի ազատութիւնը: Ընտրական կողմերուն հաւասար պատեհութիւն պիտի ընծայուին իրենց տեսակետները ընդհանրացնելու ժողովրդական խաւերէն, պաշտօնական հեռուստատեսիլի ծառայութիւններու միջոցաւ: Վերջ պիտի գտնեն պետական ու կրթական ընդհանրացնելու աշխատող քաղաքացիներու գործադրութեան սպառնալիքները բոլոր անոնց դէմ, որոնք պիտի մերժեն փուլարկել իշխանութիւններու ընտրական ցանկին: Այս բոլորը անշուշտ, ցոյց տալու համար աշխարհով մէկ, թէ ժողովրդավարութիւնը տակաւ կ'արմատաւոր-

Շարք էջ 16

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ՀԱԼԱԾԱՆՔ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ԴԵՍ

ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԿԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԱԼԵՔՍԱՆՏՐ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններէն մի քանի օր օրեր առաջ, Հայաստանի իշխանութիւնները կը գտնուին մտահոգ վիճակի մէջ եւ այդ մասին կը վկայեն վերջին զարգացումները: Երկուշաբթի, Մայիս 7-ի ուշ երեկոյեան ձերբակալուած է Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարար եւ «Քաղաքացիական անհնազանդութիւն» շարժումի հիմնադիրներէն Ալեքսանտր Արզումանեան:

Մայիս 5-ին Արզումանեանի բնակարանը խուզարկութեան ենթարկուած էր Ազգային Անվտանգութեան Ծառայութեան կողմէ: Նոյն օրը խուզարկուած էին նաեւ նախկին Պաշտպանութեան փոխնախարար Վահան Շիրխանեանի եւ «Քաղաքացիական անհնազանդութիւն» շարժումի շարք մը անդամներու բնակարանները:

Արզումանեան եւ Շիրխանեան կը կասկածուին ապօրինի եկամտուներու օրինականացման մէջ: Խուզարկութեան ընթացքին Շիրխանեանի բնակարանէն գտնուած է 55 հազար, իսկ Արզումանեանի՝ 28 հազար ամերիկեան տոլար:

ԱԱԾ-ի կողմէ հրապարակուած հաղորդագրութեամբ մը բացատրութիւններ տրուեցան խուզարկութիւններու մասին: «Ազգային Անվտանգութեան ծառայութեան ձեռնարկած միջոցառումները արդիւնքում պարզուել է, որ այս տարուայ Ապրիլի 24-26-ին Վահան Շիրխանեանը եւ Ալեքսանդր Արզումանեանը գտնուել են Մոսկուայում եւ, համաձայնութեան գալով 2005 թուականից ֆինանս-



Ալեքսանտր Արզումանեան

սական գեղծարարութեան համար հետախուզման մէջ գտնուող Ռուսաստանի Դաշնութեան քաղաքացի Լեւոն Մարկոսի հետ, կասկածելի ծագում ունեցող գումար են տեղափոխել Հայաստան», - ըսուած է ԱԱԾ-ի հաղորդագրութեան մէջ:

ԱԱԾ- հաղորդագրութիւնը կը յայտնէր նաեւ, որ Ապրիլ 27-ին «Կոնվերսաբանկ»-ի միջոցով դրածոյ 9 անձերու անուններով Հայաստան փոխանցուած է 180 հազար ամերիկեան տոլար:

Մայիս 8-ին Վահան Շիրխանեան որպէս վկայ կանչուած է ԱԱԾ, սակայն ան չէ ձերբակալուած, թէեւ ան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է որ, կրնան զինք եւս ձերբակալել:

Հայաստանի ընդդիմադիր կուսակցութիւնները միատեղ քննարկումներ կատարելով խստօրէն դատապարտեցին Ալեքսանտր



Վահան Շիրխանեան

Արզումանեանի ձերբակալութիւնը: «Ասել, որ մեղաւորը պէտք է պատժուի, ու կանգնել մի կողմ, դա նշանակում է թոյլ տալ, որ Հայաստանում 37 թիւը լինի», - ըսաւ Ազգային ժողովրդավարական Միութեան (ԱԺՄ) նախագահ Վազգէն Մանուկեան:

«Սերժ Սարգսեանը բա չի մտածո՞ւմ իր ապագայի մասին:

Շարք էջ 5

ՔՈՉԱՐԵԱՆԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԴԱԺԱՆ ՅԱՐԶԱԿՈՒՄ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Մայիս 9-ին Երեւանի մէջ տեղի ունեցած «Իմպիւնչմետ» դաշինքի հանրահաւաքէն յետոյ 20 հազար քաղաքացիներ երթ կազմակերպած են դէպի ԱԱԾ-ի շէնքը: Հազիւ ցուցարարները ԱԱԾ-ի շէնքի մօտ հասած են, ռատիկանները դաժան ծեծի ենթարկուած են ցոյցի ղեկավարներէն Դաւիթ Մաթեւոսեանին, որ ծանր մարմնական վնասուածքներով տեղափոխուած է հիւանդանոց: Ցոյցէն առանձնացնելով ու գետին նետելով սկսած են ոտքերով հարուածել «Հայկական Ժամանակ» թերթի խմբագիր եւ «Իմպիւնչմետ»-ի ղեկավար Նիկոլ Փաշինեանին: Մօտ 20 ցուցարարներ ծեծելով մտցուցած են մեքենաներ եւ տարած անձանօթ ուղղութեամբ: Ռատիկանները արցունքաբեր գազ արձակած են յատկապէս լրագրողներու վրայ եւ անոնց ձեռքերն իլուած են նկարչական գործիքները:

Ցոյցին մասնակից «Հանրապետութիւն» եւ «Նոր Ժամանակներ» կուսակցութեան ղեկավարներ Արամ Սարգսեան եւ Արամ Կարապետեան յաջողած են ազատ արձակել տալ ձերբակալուած ցուցարարներու մէկ մասը:

Շարք էջ 4

ԹՈՒՐՔԻԱ ՄՏԱՅՈՂ ՍԱՐՔՈՋԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ՖՐԱՆՍԱՅԻ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԲՈՒԷ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՅԻՆ

Մայիս 6-ին Ֆրանսայի մէջ տեղի ունեցած նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլի արդիւնքներու հիման վրայ, պահպանողական թեկնածու Նիզոլա Սարքոյի ընտրուեցաւ երկրի նախագահ: Ան ստանալով ժողովուրդի ձայներու 53 տոկոսը, պարտութեան մատնեց ընկերվարական Սիլվոյէն Ռուանայը, որ կը ձգտէր դառնալ Ֆրանսայի առաջին կին նախագահը:

Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողան շնորհաւորելով հանդերձ Սարքոյի ընտրութիւնը, մտահոգութիւն յայտնեց ընտրարշաւի ընթացքին անոր կողմէ հնչած յայտարարութիւններու կապակցութեամբ: «Ֆրանսայի ժողովուրդի ընտրութիւնն է, եւ մենք պարտաւոր ենք մեր յարգանքի տուրքը մատուցել ֆրանսացի ժողովուրդի ընտրութեան», - ըսաւ Էրդողան ու աւելցուց, որ թուրք-

ֆրանսական յարաբերութիւններու տեսանկիւնէն թուրքիոյ ցանկութիւնն է, որպէսզի այլեւս չլսենք այնպիսի յայտարարութիւններ, ինչպէս կատարեց Սարքոյին իր քարոզարշաւի ժամանակ:

Նիզոլա Սարքոյի Ռուանայի հետ իր վերջին հեռախոսակցին բանավէճի ժամանակ ըսած էր, թէ իր նախագահութեան օրով, թուրքիա ոչ մէկ պարագայի տակ Եւրոպայի Միութեան անդամ չի կրնար դառնալ:

Նիզոլա Սարքոյի ընտրութեան առթիւ շնորհաւորական զիր լղած է նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ֆրանսայի Վարիչ Մարմինը, ընտրութիւնները նկատելով ժողովրդավարութեան յաղթանակը:

«Սոցիալ Դեմոկրատ Հնչակ-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՔԵԶ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր կուսակցութիւնները նախընտրական կարգախօսանքի միանգամից կարելի է գլխի ընկնել, որ Ազգային ժողով մտնելու համար այդ կարգախօսանքի դերը գրոյացուած է, այսինքն, նրանց յոյսը ոչ միայն կարգախօսանքը չեն, այլև ընդհանրապէս դրանք չեն: Ընդհանրապէս, ո՞րն է կարգախօսանքի իմաստը: Դրանք միշտ մատնանշում են ինչ-որ բանի անհրաժեշտութիւնը, որի պակասութիւնն զգացուած է: Ասենք, կարգախօս են հռչակում ազգի բարեկեցութիւնը, որովհետեւ ազգն աղքատ է: Կամ՝ կրթութիւնը, որովհետեւ ազգն անգրագէտ է: Կամ՝ թանաքի եւ թղթի արտադրութիւնը, որովհետեւ դպրոցականները դանակներով փորփորում են դպրոցական նստարանները: Հիմա՝ ի՞նչ են հռչակում մեր իշխանամէտ կամ կառավարող կուսակցութիւնները:

Սկսենք Հանրապետականից: Ի՞նչ են յայտարարում նրանք՝ «Քեզ համար, Հայաստան»: Պարզ է, թէ սա որտեղից է գալիս՝ Ծառ Ազնաւուրից: Եւ յայտնի է, թէ ինչ առիթով է գրուել՝ 88-ի երկրաշարժի: Ինչու՞ «Քեզ համար, Հայաստան»: Սրանից մի եզրակացութիւն կարելի է անել: Հանրապետականը գլխի է ընկել, որ այն, ինչ մինչեւ հիմա արել են, Հայաստանի համար չէր, այլ՝ բոլորովին ուրիշ երկրի, եւ հիմա ժամանակն է աշխատել քեզ համար, Հայաստան: Բանն այն է, որ նման կարգախօս կարող են ունենալ, ասենք, տաշիկները, մեքսիկական ացտեկները, ֆրանսիացիները, թուրքերը կամ ատրպէյճանցիները, ասենք, իբրեւ բարեգործութիւն ուղարկուած կաթի կամ լոբու փոշու պարկի վրայ արուած գրութեամբ: 88-ին այն ձեռքը, որն աշխարհը մեկնեց երկրաշարժից աւերուած երկրին, քեզ համար էր, Հայաստան: Հանրապետականն առաւելագոյնը կարող էր կարգախօս հռչակել հետեւեալ խօսքը՝ Քեզ համար, Թուրքիա, քեզ համար, Ինդոնեզիա, եւ այլն, ուր հայրենի կառավարութիւնը մարդասիրական օգնութիւն է ուղարկել: Կամ՝ քեզ համար, Ատրպէյճան, երբ յանձնում ես Ղարաբաղը: Կամ՝ երբ հայ ժողովրդին նուաստացնում ես քո ողջ քաղաքականութեամբ, քո նախարարութիւններով, քո կողակցիսով, խօսքի ազատութեան ոչնչացմամբ: Այն վիճակը, որում այսօր յայտնուել է Հայաստանը, ինքնին պարզ բան է, «Քեզ համար, Ատրպէյճան» կարգախօսի կենսագործումն է, եւ միայն դա գլխի ընկնելուց յետոյ կառավարող կուսակցութիւնը կարող է կարգախօս հռչակել «Քեզ համար, Հայաստան»-ը: Բայց այստեղ որոշ անհարմարութիւն կայ: Այս կարգախօսով մեր հասարակութիւնն աւելի յիմար վիճակի մէջ է ընկնում: Նա պետք է քուէարկի ՀՀԿ-ի օգտին առանց իրեն հաշիւ տալու՝ իսկ մինչեւ հիմա ու՞մ համար էիր աշխատում, ՀՀԿ, եւ եթէ ոչ մեր համար, ինչու՞ ես մեր երկրում քուէարկուում:

Յաջորդ կարգախօսը, որն աջ ու ձախ կարելի է հանդիպել, Բարգաւաճ Հայաստանի «Միասին կառուցենք բարգաւաճ երկիր» է:

Եւ բոլոր պատահաններին միայն մի Ծառուկեան Գագիկ է: Այսինքն, բարգաւաճման համար վստահութիւն ներշնչող մի կերպար, որի հայեացքը քեզ չի հարցնում՝ ուզու՞մ ես ունենալ ժողովրդավարութիւն, ուզու՞մ ես ունենալ նոյն իրաւունքները, ինչ որ՝ ես, ուզու՞մ ես ինձ հաւասար վճարել կամ չվճարել հարկերը: Այդ հայեացքի հռչակած բարգաւաճ երկրի մէջ կայ այս երկրի ցանկացած քաղաքացու բացակայութիւնը, որովհետեւ չկայ ամենագլխաւորը՝ որեւէ կարգախօսից անկախ գոյութեան եւ կեանքի, մտքի եւ աշխատանքի

Կամ կարգախօսն է կեղծ, կամ՝ Ծառուկեան Գագիկը: Ես համոզուած եմ՝ երկուսն էլ կեղծ են, որովհետեւ դրանցից ոչ մէկը չի երաշխաւորում այնպիսի մի կեանք, որում յանցագործութիւնը, քաղաքական պատեհապաշտութիւնը, անգրագիտութիւնը կը տարանջատուեն «բարգաւաճ» բառի իրական իմաստից: Կարգախօսը պետք է հաւատարմութիւնը: Իսկ ես չեմ հաւատում Ծառուկեան Գագիկին եւ նրա կուսակցութեանը, քանի որ տեսել եմ միայն մէկի բարգաւաճումն այն օրից, ինչ այդ մարդը վայելում է իշխանութիւնների հովանաւորութիւնը եւ անպատժելիութիւնը

առկայութիւնը եւ իրաւունքը: Կը նշանակի, կամ Գագոն բոլորովին այլ բան է հասկանում «բարգաւաճ» բառի տակ եւ դա արդէն կասկածի տակ է դնում ընդհանրապէս նրա տարրական դպրոց աւարտած լինելու հանգամանքը, կամ բացարձակապէս տեղեակ չէ, թէ ինչ կարգախօս է հռչակել իր կուսակցութիւնը: Այսինքն, մի կարգախօսի ներքոյ իդենտիֆիկացուած չեն Ծառուկեան Գագիկն ու երկրի խնդիրները: Ուրեմն կամ կարգախօսն է կեղծ, կամ՝ Ծառուկեան Գագիկը: Ես համոզուած եմ՝ երկուսն էլ կեղծ են, որովհետեւ դրանցից ոչ մէկը չի երաշխաւորում այնպիսի մի կեանք, որում յանցագործութիւնը, քաղաքական պատեհապաշտութիւնը, անգրագիտութիւնը կը տարանջատուեն «բարգաւաճ» բառի իրական իմաստից: Կարգախօսը պետք է հաւատարմութիւնը: Իսկ ես չեմ հաւատում Ծառուկեան Գագիկին եւ նրա կուսակցութեանը, քանի որ տեսել եմ միայն մէկի բարգաւաճումն այն օրից, ինչ այդ մարդը վայելում է իշխանութիւնների հովանաւորութիւնը եւ անպատժելիութիւնը: Անձամբ ես «բարգաւաճ» ասելիս հասկանում եմ իրականութիւն առանց Ծառուկեանի եւ նրա հովանաւորների, որովհետեւ «բարգաւաճ» բառը պետք է քննութիւն բռնի Աճառեանի բացատրական բառարանի ողջ նշանակութեամբ:

Ի՞նչ է հռչակում ՀՅԴ-ն: Նա ասում է՝ «Մեր հին ընկերը Դաշնակցութիւնն է»: Սա մի կարգախօս է, որը չի վիճարկում իմ հաւատը: Բայց ահա իմ տարիքը (նկատի ունեմ ՀՀ-ի տարիքը) այնքան է, որ ՀՅԴ-ն ոչ մի կերպ չէր կարող իմ հին ընկերը լինել, առաւելելս որ ոչնչով չի ապացուցել այդ ընկերութիւնը: Բայց հասկանալի են ՀՅԴ-ի ակնարկները՝ ընկերն ընկերով համար կ'անի այն, ինչ չի անի «ախպերն ախպոր համար»: Այստեղ ես ՀՅԴ-ին չեմ հաւատում: Իսկ ԲՀԿ-ն որտեղի՞ց

ծլեց: Ինչու՞ իմ ընկերով գաղափարական գոյութեան դաշտում հնարաւոր դարձաւ տուկի թելը կամ կարտոֆիլի սերմացուն իբրեւ ընտրակաշառք: Ինչպէ՞ս հնարաւոր դարձաւ իմ երկրում նման կուսակցութեան ծնունդը: Նշանակում է, որ ՀՅԴ-ն չի կարող իմ երկրում ընկեր ունենալ: Ինչու՞ Ծառուկեան Գագիկի մօր՝ հարկեր չվճարելու մասին հպարտ յայտարարութիւնը իմ, բայց ոչ իմ ընկերով ընդվզումը չի առաջացնում, առնուազն չի գնում Քոչարեանի մօտ եւ չի պահանջում պայքարել կողակցի դրսեւորման դէմ, իսկ անգլխացի դիւանագէտին Բաղդասարեան Արթուրի ասածնե-

րը համարում են դաւաճանութիւն, եւ ՀՅԴ-ն աչքն անգամ չի թարթում ասելու համար, որ Արթուրի ասածները մինչեւ վերջ համապատասխանում են իրականութեանը: Բայց ամենասարսափելին ահա թէ ինչն է՝ ամէն օր այս երկրում դժբախտանում են նոր մարդիկ, ինքնասպանութեան փորձ են կատարում, վռնդում են իրենց տները, աջ ու ձախ անիծում են կարեւոր չէ, թէ ում, դաւաճանում են իրենց ընկերներից, որոնք այս պահին կոտլիցիոն կառավարութեան կազմում են, այդ մարդիկ իրենց գլխի ճարը տեսնելու համար ձեւաւորում են կուսակցութիւններ կամ անդամագրուած դրանց ու յանկարծ պարզում, որ իրենց հին ընկերը Դաշնակցութիւնն է: Իսկ ու՞ր էր Դաշնակցութիւնը մինչեւ այդ մարդկանց դժբախտանալը, տները դուրս շարտուելը, մինչեւ ինքնասպանութեան փորձ կատարելը, մի կտոր հացի համար հարեւանին մորթելը: Ու՞ր էր: Ինչու յանկարծ հիմա նրանք պարզեցին, որ հին ընկեր են ունեցել: Ու՞մ հին ընկերն է Աժ փոխնախագահ ընկեր Վահանը, եթէ նրա դուստրը մեր երկրի սահմանները պաշտպանող, նրա համար այսօր էլ ընկնող հազարաւոր հայրերիցից գոնէ մէկին, հազարաւոր չքաւոր երիտասարդներից գոնէ մէկին թողած յանկարծ ընկերութիւն է անում Սերժ Սարգսեանի եղբօր՝ Սաշիկի որդու հետ: Հասկանալի է, չքաւորութիւնը եւ անօգնականութիւնը տգեղ են: Եւ ընկեր Վահանը դա գիտի, գիտի նաեւ այն ժամանակ, երբ որպէս էլեկտրատ համարող այդ հազարաւոր չքաւորների դուռն է գնում ու ասում, որ ձեռք հին ընկերը Դաշնակցութիւնն է:

Յաջորդը եւ վերջինը ՄԱԿ-ն է: Սա իր համար կարգախօս է հռչակել ամենամասնականալիս՝ «Այն ենք ուզում, ինչ՝ ամէնքդ»: Իբր, ՄԱԿ-ի ուզածը բացառապէս համընկնում է ՀՀ քաղաքացիների ուզածի հետ: Նրանք, ովքեր մասնակցել են Աշտարակում այս կուսակցութեան հանդիպմանն ընտրողների հետ, կը վկայեն, որ Արսէնեանը բացարձակապէս գաղափար չունի, թէ ինչ կարգախօս է հռչակել իր կուսակցութիւնը:

Մարդիկ ուզում են աշխատանք, ուզում են հեռանկար, իսկ Արսէնեանն ասում է, որ ինքը անդամակցում է ԱՊՀ եւ եւրոպական մի շարք կառույցների: Եւ որ գիտելիքը ուժ է: Սա ասում է մարդկանց, ովքեր յամենայնդէպ սովորել են մի կրթական համակարգի օրօք, երբ չսովորելն անէ՞ք էր: Այսինքն, չորս տարի Աժ-ում աշխատած Գուրգէն Արսէնեանը մինչեւ հիմա չգիտի, թէ ինչ է ուզում ժողովուրդը, առնուազն չգիտի, թէ ընտրողի հետ հանդիպելիս ինչը պիտի կարեւորել: Արսէնեանի գործունէութիւնը նոյնպէս պէտք է դիտարկել պատմական ծիրին մէջ: 2004-ի Ապրիլի 13-ին, երբ փառաբանում էր ոստիկանութեան եւ յատուկ ծառայութիւնների վայրագութիւնը հանրահաւաքի դուրս եկած ժողովրդի նկատմամբ, վստահ էր, որ ժողովրդի ուզածը դա է: Երբ կէս բերանով չմիացաւ պետական կարիքների համար իրենց տները դուրս շարտուած եւ չնչին գումարներով փոխհատուցուած բնակիչների դժգոհութիւններին, ա՞յն էր, ինչ ուզում էին ամէնքդ: Ուրեմն, ինչու՞ հիմա նա պիտի այն ուզի, ինչ՝ ամէնքս: Բայց այս ամէնը դեռ՝ ոչինչ: Նայենք ապագային: Ինչու՞ պէտք է վստահել ՄԱԿ-ին Աժ-ում մեր խնդիրների բարձրացումը: Բանն այն է, որ խնդիրներ ասելով Արսէնեանը նկատի ունի սոցիալական ինչ-ինչ հարցեր, որոնք սնում են այս կամ այն կուսակցութեան պոպուլիզմը: Երբ խօսքը վերաբերում է ժողովրդավարութեանը, խօսքի ազատութեանը, հանրահաւաքներ անցկացնելու սահմանադրական իրաւունքին, Արսէնեանը դառնում է ՀՀԿ-ական, ԲՀԿ-ական, կամ ՀՅԴ-ական: Այսինքն, այն չի ուզում, ինչ ամէնքս:

ՌՈՒԲԵՐԴ ՍԱՐԳՍԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՀՆԱՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶՆԱՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՃԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍԱՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ
ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

ՕՐԸ 200 ԱՆԳԱՄ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԱՍՆՈՒՄ Է ՏՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Այս ընտրութիւնների նախընտրական շրջանն ընթանում է աննախադէպ խախտումներով: Երբեք վարչապետն այսքան մեծածաւալ խախտումներ չի իրականացրել, որքան այս ընտրութիւնների ընթացքում:

Ամենաշատ վարչական ուսուրան օգտագործում են ՀՀ-ն ու ՀՅԴ-ն: Այս եւ այլ խախտումների մասին Մայիսի 7-ին խօսեց «Գերագոյն խորհուրդ-պատգամաւորական ակումբ»-ի նախագահ Ռուբէն Թորոսեանը: Նա կատարել է ուսումնասիրութիւն, որը բերել էր տեսքով բաժանուէր կրող սեղանի մասնակիցներին: Պարոն Թորոսեանը ուսումնասիրել է, օրինակ՝ Մայիսի 3-ի եթերը եւ պարզել, որ միայն այդ օրը 7 ձեւի հանդիպում է ունեցել ՀՀ վարչապետ, ՀՀԿ խորհրդի նախագահ Սերժ Սարգսեանը, որը լուսաբանուել է 10 հեռուստաընկերութեամբ, նուազագոյնը 3 անգամ: Այսինքն՝ «Միայն այդ օրը 200 անգամ Սերժ Սարգսեանն անվճար մտել է իւրաքանչիւրիս տուն», - այսօր յայտարարեց Ռուբէն Թորոսեանը: Նա նկատեց, որ առանց բացառութեան բոլոր հեռուստաընկերութիւններն առանց «քաղաքական գովազդ» լուսազրի, ասել է թէ անվճար, հեռարձակում են բազմապիսի հաղորդումներ, այսպիսով խախտելով օրէնքը: Թորոսեանը մասնաւորապէս անդրադար-

ձաւ ժողովրդական կուսակցութեան նախագահ Տիգրան Կարապետեանին, որը «առաւօտեան եթերում է, երեկոյեան եթերում է, մէկ ոսկեգօծ սրահում, մէկ ոչ ոսկեգօծում, մէկ Հեղինէի մօտ, մէկ Հռիփսիմէի մօտ» եւ այլն: Պարոն Թորոսեանը նկատեց նաեւ, որ շատ է լուսաբանում Շաւարշ Գոչարեանը, այնինչ, օրինակ՝ «Հանրապետութիւնը», «Նոր ժամանակները» շատ քիչ են լուսաբանում, իսկ «Իմպիւրիալիզմ» անունով դաշինք ասես ընդհանրապէս չի մասնակցում ընտրութիւններին:

Ռուբէն Թորոսեանը նկատեց, որ ԿԸՅ նախագահ Գարեգին Ազարեանին բացարձակապէս չի հետաքրքրում, թէ ինչպէս են ծախսում նախընտրական հիմնադրամի գումարները, օրինակ՝ ՀՀԿ-ի ծախսերի ուսումնասիրութիւնից հասկանալի է, որ «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի» մասին օրէնքը պահպանելու դէպքում նշուած գումարը չէր բաւարարի միայն հեռուստատարվազդի համար: Այնինչ, միայն մի պատասխար մօտ 5 հազար դոլար արժէ: Պարոն Թորոսեանը մի հետաքրքիր տեսդէնք էլ նկատեց. 2003 թուականին 200 բողոքից գոնէ մէկը բաւարարուել էր, իսկ այսօր 300 բողոքից ոչ մէկը չի բաւարարուել: Այնպէս որ, արդէն դատարան դիմելն էլ անիմաստ է համարում պարոն Թորոսեանը:

«ՎԱՏ Է ԵԱՌՈՒԿԵԱՆԻ ՓՈՂՆԵՐԻ ԸԱՄԱՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԱՌՆԱԸ» ԿԱՐԾՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԳ ԸՆԶԱԿԵԱՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՌԱՒՕՏ»: Մայիսի 8-ին ԱՕՔՄ-ում «Երիտասարդ Բաղաձայնների Միութիւն» (ԵԲՄ) նորաստեղծ նախաձեռնութիւնը կազմակերպել էր կոնֆերանս-քննարկում՝ «Երիտասարդների դերը հանդուրժողականութեան մթնոլորտ ձեւաւորելու գործում» թեմայով:

Կոնֆերանսին մասնակցում էին ԵՊՀ դասախօս, քաղաքական գիտութիւնների դոկտոր Խաչիկ Գալստեանը, ՀՅԴ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան ատենապետ Վահէ Սարգսեանը, ՍԴՀԿ «Սարգիս Տիրունի» երիտասարդական միութեան ատենապետ Նարեկ Գալստեանը, «Հայ երակ երիտասարդական ակումբ» հ/կ-ի գլխաւոր համակարգող Ստեփան Խզրթեանը եւ այլք: ԵՊՀ դասախօս Խ. Գալստեանի համոզմամբ, կուսակցութիւնները ամենեւին էլ չեն ջլատում երիտասարդներին: Սակայն նա վերջիններիս խորհուրդ տուեց նախեւառաջ «զարգանալ պրոֆեսիոնալիզմի մէջ, յետոյ միայն մտածել կուսակցական լինելու մասին»:

ՍԴՀԿ «Սարգիս Տիրունի» միութեան ատենապետ Ն. Գալստեանը ի պատասխան «Առաւօտի» հարցին՝ մի՞թէ կոնֆերանսների արդիւնքում է հանդուրժողակա-

նութեան մթնոլորտ ստեղծում, պատասխանեց. «Նմանատիպ բանավէճերը, կրող սեղանի շուրջ միմեանց կողքին նստելն աւելի քաղաքակիրթ է, քան միմեանց հետեւից պատասխաններ պոկելն ու իրար հետեւից խօսելը»: Երիտասարդ Հնչակեանի համոզմամբ. «Հայաստանի քաղաքական դաշտն անառողջ է, իսկ մենք, որպէս քաղաքական դաշտի երիտասարդներ կայացուցիչներ, յաճախ այնքան էլ չենք տարբերում մեր աւազները: Իսկ այս կոնֆերանսը ողջունելի է նրանով, որ երիտասարդներն իրենց վրայ են վերցրել քաղաքական ուժերին կրող սեղանի հրաւիրելու դժուարին ու անշնորհակալ գործը»:

Ն. Գալստեանի կարծիքով, երիտասարդների կուսակցական լինելն ունի իր ճշմարիտ ու սխալ կողմերը: Նրա մեկնաբանմամբ, սխալ է, որ երիտասարդը դառնում է կուսակցական՝ Գագիկ Ծառուկեանի փողերի համար, իսկ ճիշդն էլ այն է, որ երիտասարդը կուսակցականացում է յանուն գաղափարի ու հաւատարմի լիզերին: «Կուսակցական լինելը չպէտք է դարձնել անձնական բարեկեցութեան հիմք», - ասաց ՍԴՀԿ երիտասարդական միութեան ատենապետը:

ԱՍԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ ՈՒՆԵՆ ԸՆԴԴԻՍԱԴԻՐՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետական եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնների վարկանիշը շատ ցածր է. նրանք միասին չեն յաղթահարելու հինգ տոկոսի պատնէշը, նոյնիսկ չնայած այդ երկու կուսակցութիւնների ֆինանսական հնարաւորութիւններին»: Այս մասին Մայիսի 9-ի քննարկմանը յայտարարեց Հայոց Համագաղախ Շարժման վարչութեան անդամ Արամ Մանուկեանը: Նա նշեց, որ ինքը նման եզրակացութեան է եկել թիւ 4 ընտրատարածքում, որտեղ, նա քուէարկուած է մեծամասնական ընտրակարգով, իր անցկացրած սոցիոլոգիական հարցումների արդիւնքների հիման վրայ: Ա.Մանուկեանը յայտնեց, որ անձամբ այցելել է 3 հազար բանակարաններ եւ պարզել, որ մարդիկ ոչ մի ցանկութիւն չունեն այդ երկու կուսակցութիւններին ձայն տալու:

Ա. ՍԱՐԳՍԵԱՆ. «ՄԻ ԽԱԽՏԵՔ, ՄԻ ԿԵՂՃԵՔ, ՄԻ ՇՆԱԶԵՔ, ՄԻ ԳՈՂԱՑԵՔ ՁԱՅՆԵՐԸ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հանրապետութիւն», «Նոր ժամանակներ» կուսակցութիւնների եւ «Իմպիւրիալիզմ» դաշինքի ղեկավարներն հանդէս եկան միամական ասուլիսով, որի ժամանակ ներկայացրին իրենց համատեղ ուղերձը: Ուղերձում մասնաւորապէս նշուած է, որ «մեր երկիրը կանգնած է ճակատագրական ընտրութեան սահմանագծին»: Ըստ այդմ՝ «Եթէ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնների քուէարկութեան արդիւնքները արմատապէս չխեղաթիւրուեն եւ զլիւսվայր չչրջուեն՝ մենք՝ «Հանրապետութիւն», «Նոր ժամանակներ» կուսակցութիւններն ու «Իմպիւրիալիզմ» դաշինքը, կ'ունենանք խորհրդարանական մեծամասնութիւն եւ իմպիւրիալիզմը կ'իրականացնէք խորհրդարանական ճանապարհով: Մենք վստահուած ենք ազատ եւ արժանապատիւ կեանքով ապրելու ձեր բնական մղումին ու վճռականութեանը»:



Ասուլիսէն պահ մը

Արամ Սարգսեանը նշեց, որ ձայներին տէր են կանգնելու ամբողջ ժողովրդով, որ իրենց ուժը հասարակութիւնն է: «Մենք ասում ենք մի խախտէք, մի կեղծէք, մի շնացէք, մի գողացէք ձայները, իսկ եթէ գողանաք, ապա մենք ոտքի ենք կանգնելու եւ հրապարակապէս գործողութեամբ ու փողոցներում պայքարելու ենք: Սա է մեր պայքարի իմաստը, որի պահանջարկն այսօր ունի ժողովուրդը», - ասում է Արամ Սարգսեանը եւ այնուհետեւ աւելացնում, որ «այս իշխանութիւնները գող են, դրա համար էլ հարկաւոր է շատ պահակներ ունենալ»՝ նկատի ունենալով այն, որ երբեք քաղաքական ուժերը համատեղ որոշել են առանձին հանդէս գալ քուէաթերթիկներում, այլ ոչ մէկ միասնական դաշինքով:

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆԸ ԲՈԼՈՐԻՆ ԹՈՅԼ ՏՈՒԵՑ ԵՐԱԶԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Այդ ամէնը ծիծաղելի է եւ օղի մէջ», - Մայիսի 7-ին ԱԺ նախագահ, հանրապետական Տիգրան Թորոսեանը մեկնաբանեց այն լուրերը, թէ «ՀՀԿ»-ի այն անդամները, որոնք տարբեր հիմնարկներ են ղեկավարում, իրենց աշխատակիցներին ստիպում են գալ հանրահաւաքների: «Եթէ որեւէ մէկը չի ցանկանում գնալ, թող չգնա», - ասաց Տիգրան Թորոսեանը եւ խոստացաւ աջակցել կամ վերականգնել բոլոր նրանց իրաւունքները, ովքեր խնդիրներ կ'ունենան ՀՀԿ-ի հանրահաւաքներին չմասնակցելու համար:

Պարոն Թորոսեանը տեղեկացրեց, որ ՀՀԿ-ն ողջունում է իր կուսակից Գալուստ Սահակեանի յայտարարութիւնը, որ Մայիսի 12-ին իրենք խորհրդարանում մեծամասնութիւն են կազմելու: Որպէս Ընտրական օրէնսգրքի գիտակ, Տիգրան Թորոսեանի փորձեցին պարզել, թէ վարչապետ Սերժ Սարգսեանի գործունէութեան լուսաբանումը արդե՞ք չի խախտում ԸՕ-ի 18 յօդուածի 4-րդ կէտը, որը Պետական եւ տեղական

ինչ վերաբերում է նախընտրական դաշինքի ձեւաւորմանը, ապա Նիկոլ Փաշինեանը նշեց, որ այդ հնարաւորութիւնը ՀՀ «Ընտրական օրէնսգրք»-ը չի տալիս: «Ձայների իմաստով մենք շատ բան չենք կորցնում, սակայն քաղաքական իմաստով լաւ կը լինէր, որ ունենայինք նման դաշինք: Մեր երեք ուժերի էլեկտորատը չի համընկնում, եւ շատ հաւանական էր, որ եթէ մեզնից միայն մէկը մնար ու միւս երկուսը դուրս գային, ապա այդ ուժերի ընտրողները չէին գնա ընտրական տեղամասեր», - աւելացրեց Նիկոլ Փաշինեանը:

Իսկ Արամ Կարապետեանի համոզմամբ՝ արմատական ընդդիմութեան ձայներն այնքան շատ են, որ որեւէ տիպի մրցակցութիւն գոյութիւն չունի իրենց մէջ՝ թէ ով որքան կը հաւաքի: «Դա մեզ համար որեւէ նշանակութիւն չունի: Մենք պայմանաւորաւորութիւն ունենք, որ եթէ որեւէ մէկը չմտաւ խորհրդարան, ապա մտնողը պայքարում է, որ իմպիւրիալիզմը դառնայ օրակարգի հարց եւ խնդիրը լուծուի: Հակառակ դէպքում, մանդատները դնում ենք եւ դուրս ենք գալիս փողոց. իմպիւրիալիզմը պէտք է կատարուի կամ խորհրդարանում, կամ փողոցում», - յայտարարեց Արամ Կարապետեանը:

ինքնակառավարման մարմիններին եւ նրանց ներկայացուցիչներին արգելում է քարոզչութիւն կատարել եւ ցանկացած բնօրէն քարոզչական նիւթ տարածել:

«Ես վստահ եմ, որ վարչապետի այցերը լուսաբանելու մէջ չկայ մի բան, որն արգելում է Ընտրական Օրէնսգրքը: Ընտրութիւնները կարեւոր են, բայց ոչ այնքան, որ դրա համար փակենք պետական մարմինները: Մարդիկ չպէ՞տք է իմանան, թէ ում է ընդունում վարչապետը կամ ուր այցելում», - լրագրողներին դիմեց պարոն Թորոսեանը:

Նա անդրադարձաւ նաեւ ուսական «Տրուդ» թերթի այն հրապարակմանը, թէ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարեանը հայկական Սահակաշվիլին է: «Ես լուրջ չեմ վերաբերում «Տրուդին»: Ռուսաստանում աւելի լաւ թերթեր կան: Ընդհանրապէս, մենք բոլորս աւելի լաւ ենք պատկերացնում, թէ ինչ է կատարուած ՀՀ-ում, քան դրսից այստեղ գործուողած լարգրողները», - ասաց Տիգրան Թորոսեանը:

ԼՈՒՐԵՐ

«ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՄԵԴԱԼ ԴԱՌՆԱԼՈՒ ԺԱՍՆԱԿԸ ԶԵՐ»



Հ.Հ. Պաշտպանութեան նախարար Միխայիլ Յարութիւնեան կը պարգևատրէ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Երկրապահների տօնի առիթով կազմակերպուած հանդիսաւոր արարողութեանը, որը տեղի ունեցաւ Մայիս 8-ին Յ. Պարոնեանի անուան երաժշտական կոմպոզիչի պետական թատրոնում, ԵԿՄ նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանուէլ Գրիգորեանը շնորհաւորական խօսքով դիմեց դահլիճում հաւաքուածներին՝ ասելով, որ «շնորհաւորում է բոլոր այն երկրապահներին, որոնք իրենց համարում են այս երկրի տէրը եւ այն բոլորին, որոնք այսօր պատրաստ են ամէն տեսակի ծառայութիւններ մատուցել յանուն ազգի»:

«Միայն յաղթանակ ունենալը չէ կարելորդ, դրան տէր կանգնել է պէտք: Եթէ տէր չկանգնեցինք մենք, կը կանգնեն ուրիշները՝ գել ու գազանները: Կոչ եմ անում, որ երկրապահ տէր լինի իր փառքին ու պատուին», - իր խօսքում կարեւորեց գեներալը:

Մեծամասնական ընտրակարգով պատգամաւոր դառնալ պատրաստուող Մանուէլ Գրիգորեանը չըջանցեց նաեւ Մայիսի 12-ի ընտրութիւնների թեման՝ ասելով. «Գնացէք ընտրութեան իրօք գաղափարով, անունով եւ ընտրէք ձեր խղճով, հաւատքով: Անպայման մասնակցէք այս ընտրութեանը, որ յետոյ ուրիշին չմեղադրէք, չքննադատէք, հասկանալի է: Ուռա ընկերներ»:

Ի դէպ, Եռաբլուրում գեներալ Մանուէլը հրաժարուել էր գրուցել

լրագրողների հետ որեւէ հարցի շուրջ:

Մինչ հանդիսութեան բուն ընթացքին անցնելը ներկաները մէկ րոպէ լուսթեամբ յարգեցին զոհուածների յիշատակը, իսկ Արարատեան թեմի առաջնորդ Նաւասարդ Եպիսկոպոս Կոնեանը փոխանցեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնութիւնն ու հայրապետական բարեմաղթանքները: «Եղէք զօրաւոր, գլուխներդ հպարտ, բազուկներդ հզօր, եւ միշտ յաղթանակող», - նշուած էր Կաթողիկոսի ուղերձում:

Այնուհետեւ՝ շնորհաւորական խօսքով հանդէս եկաւ ՀՀ պաշտպանութեան նախարար Միխայիլ Յարութիւնեանը եւ դիմելով դահլիճում նստած ազատամարտիկներին՝ ասաց. «Այդ դուք էիք, որ երկիրը պաշտպանելու ներքին մղումով կանգնեցիք կողք-կողքի, եղաք եւ զինուոր, եւ հրամանատար: Հակառակորդը վախենում էր ձեր հաւաքական ուժի զօրութիւնից: Հաւատացէ՛ք՝ ոչ ոք չի մոռացուել, ոչինչ չի մոռացուել»:

Հանդիսութեան վերջում ԵԿՄ-ի, ՀՀ Պաշտպանութեան Նախարարի եւ ԼՂՀ Պատպանութեան Նախարարի կողմից մեղալներ ու յուշամեդալներ յանձնուեցին բազմաթիւ ազատամարտիկներին: Պարգեւատրուեցին նաեւ Վազգէն Սարգսեանի մայրը՝ տիկին Գրետան, գեներալ Մանուէլ Գրիգորեանը, բանաստեղծուհի Մետաքսին:

ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԵՆ ԱՐԳԵԼՈՒԱԾ ՎԱՐՈՒԵԼԱԿԵՐՊ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրութիւնների Դիտորդական Առաքելութիւնը (ԸԴԱ) հրապարակել է ՀՀ ԱԺ ընտրութիւնների վերաբերեալ երրորդ միջանկեալ գեկոյցը: Մօտ 11 էջանոց գեկոյցում դիտորդներն անդրադառնում են ընդհանուր իրավիճակին, թեկնածուներին, քարոզչական միջավայրին, ընտրութիւնների կազմակերպմանը, բողոքներին եւ դիմումներին, լրատուական դաշտին եւ այլն:

Ըստ դիտորդների՝ Ապրիլի 18-ից Մայիսի 2-ը ընդգրկող ժամանակահատուածում ընտրութիւնների նախապատրաստական աշխատանքները շարունակուել են ըստ սահմանուած ժամանակացուցի եւ կանոնաւոր ընթացք ունեն: Զեկոյցում կալ անդրադարձ ՕԵԿ նախագահի եւ օտարերկրեայ դիւանագէտի միջեւ տեղի ունեցած զրոյցի գաղտնալմամբ, Ռոբերդ Քոչարեանի կողմից՝ Արթուր Բաղդասարեանի խօսքերը «դաւաճանութիւն» որակելուն: «Դեռեւս պարզ չէ, արդեօ՞ք հետաքննութիւն է նախաձեռնուել պարզելու, թէ ինչպէս եւ ում կողմից է արուել ձայնագրութիւնը», - ասուել է գեկոյցում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ծագած հարցի շուրջ, ըստ գեկոյցի, հանդիպում է ինդրել ԱԱԾ-ի հետ, սակայն այն մերժուել է հետեւեալ բացատրութեամբ՝ «այս գործը պետութեան կողմից չի յարուցուել, հետեւաբար այս պահի դրութեամբ մենք մեկնաբանութիւններ չունենք»:

Դիտորդներն անդրադարձել են «անձնագրահաւաքների» մասին յայտարարութիւններին, երբ քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչները անձնագրերի տուեալներ են վերցնում կամ հաւաքագրում անձնագրերի պատճէնները կամ բուն անձնագրերը: «Արդեօ՞ք յայտարարութիւնները որեւէ հիմք ունեն, թէ ոչ, հնարաւոր չէ ստուգել, այնուամենայնիւ, դրանց տարածումը կարող է ընդունուել ընտրազանգուածի մի մասի կողմից անվստահութեան եւ ցինիզմի արտայայտում», - նշում են դիտորդները:

Դիտորդները նկատել են, որ Երեւանի կենտրոնի կոմերցիոն վահանակներում գերակշռում են Հանրապետական կուսակցութեան եւ Բարգաւաճ Հայաստանի քարոզչական պատասխանները, ինչպէս նաեւ Հայ յեղափոխական դաշնակցութեան (ՀԾԴ)՝ մի փոքր աւելի պակաս:

Ընտրական օրէնսդիրքն արգելում է կուսակցութիւններին եւ թեկնածուներին ընտրաշաւի ընթացքում քաղաքացիներին արտօնեալ պայմաններով, ուղղակի կամ անուղղակի, տալ կամ խոստանալ որեւէ ապրանքներ կամ ծառայութիւններ:

յութիւններ: «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ուղղակիօրէն դիտարկել է քաղաքական կուսակցութեան կողմից ապրանքների տրամադրման մի դէպք, որը համապատասխանում է ընտրաշաւի ընթացքում արգելուած վարուելակերպի մասին իրաւական սահմանմանը: Ընտրական իշխանութիւնները, սոյն շարադրանքի դրութեամբ, որեւէ պաշտօնական բողոք չեն ստացել ընդդէմ այս կամ այլ նմանատիպ վարուելակերպի», - ասուել է գեկոյցում:

«Թիւ 30 ԸԸՀ-ում գրանցուած մեծամասնական թեկնածուի կողմնակիցն Ապրիլի 26-ին դանակահարուել է, որի հետեւանքով մահացել է: Ապրիլի 28-ին գլխաւոր դատախազութիւնը գանգահարել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երեւանեան գրասենեակ փոխանցելու, որ «ոչ մի քաղաքական ենթատեքստ չի կարելի վերագրել միջադէպին»: «Գլխաւոր դատախազութիւնը նման յայտարարութիւն է արել՝ արձագանքելով Ապրիլի 19-ին Երեւանի էրեբունի համայնքում մրցակից քաղաքական կուսակցութիւնների աջակիցների միջեւ տեղի ունեցած երկկողմանի կրակոցների մասին յայտարարութեանը», - ասուել են գեկոյցի հեղինակները:

Դիտորդները արձանագրել են, որ Հանրային լրատուամիջոցները մինչեւ օրս իրականացրել են անվճար ժամանակի տրամադրման վերաբերեալ իրենց իրաւական պարտաւորութիւնները, եւ բոլոր մասնակից կուսակցութիւնները եւ դաշինքներն օգտուել են իրենց իրաւունքից, թէեւ ոչ լիովին:

Ըստ գեկոյցի հեղինակների՝ մոնիտորինգ արուած հեռուստատիւքները լրատուական թողարկումներում քաղաքականութեան հետ առնչուող տեղեկատուութեան ամենամեծ բաժինը նուիրել են երեք իշխանական եւ մէկ իշխանամէտ կուսակցութիւններին: Իշխանութիւնների գործունէութեան նկատմամբ լրատուամիջոցների հիմնական ուշադրութիւնը մեծապէս կենտրոնացուած էր վարչապետ Սերժ Սարգսեանի վրայ:

Ըստ նրանց՝ հեռուստատեսային հաղորդումները ներկայացրել են Ս. Սարգսեանի հանրային ելոյթները երկրով մէկ շրջապայցելու այնպէս, որ յստակ չեն տարբերակուել որպէս վարչապետ եւ ՀՀԿ ղեկավարի նրա դերակատարութիւնները: Դիտորդները եզրակացնում են, որ դա արտացոլում է աւելի ընդարձակ հարց, այն է՝ «դժուար է կիրառել պաշտօնեաների կողմից քաղաքական քարոզչութեան կամ քարոզչութեան համար պետական աղբիւրների օգտագործման վերաբերեալ իրաւական դրոյթները»:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՈՒԿԱՅ ԱՌԹԻ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՈՒ ՄԵԴԱԼՆԵՐ Է ՇՆՈՐՅԵԼ ՄԻ ԽՈՒՄԲ ՍԱՐԴԿԱՆՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Յաղթանակի, Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի օրուայ եւ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձի առիթւ Լեւոնային Ղարաբաղի առաջնորդ Արկադի Ղուկասեանի հրամանագրերով մի խումբ մարդիկ պարգեւատրուել են շքանշաններով եւ մեդալներով:

Հայրենիքի պաշտպանութեան գործում ցուցաբերած բացառիկ քաջութեան ու անձնական արիւթեան համար «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով են պարգեւատրուել 9 հոգի, որոնցից 3-ը՝ յետմահու: «Արիւթեան համար» մեդալով պարգեւատրուել է 660 հոգի, որոնցից 168-ը՝ յետմահու, «Մարտական ծառայութիւն» մեդալով՝ 1217 հոգի, որոնցից 16-ը՝

յետմահու: Շուշի քաղաքի ազատագրման համար մղուած մարտերում ցուցաբերած անձնական խիզախութեան համար «Շուշիի ազատագրման համար» մեդալով պարգեւատրուել է 172 հոգի, որոնցից 11-ը՝ յետմահու:

«Մերոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրուել է Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսեանը՝ «ղարբաղեան հիմնախնդրի արդարացի լուծման իրատեսական ուղիները եւրոպական եւ միջազգային հանրութեանը լիարժէք ներկայացնելու, արցախահայութեան ինքնորոշման եւ անկախ պետականութեան կերտման իրաւունքն ու կամքը պաշտպանելու գործում ցուցաբերած ակնառու ծառայութիւնների համար»:

ԹՈՒՐՔԻԱ ՄՏԱՅՈԳ ՍԱՐՔՈԶԻԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ

Շարունակուած էջ 1-էն

եան կուսակցութիւնը ինք եւս կը ձայնակցի Հանրապետութեան ժողովրդային զանգուածներուն, միասնաբար նշելու յաղթանակը: Արդարեւ այս մէկը Ֆրանսայի յաղթանակն է, նաեւ աշխատանքի եւ յարգանքի յաղթանակը, միաժամանակ իրաւունքի եւ պարտականութեան յաղթանակը, արժէքներ՝ որոնց համար մեր կուսակցութիւնը աշխատած է իր հիմնադրութենէն սաղին», - ըսուած է նամակին մէջ, յոյս յայտնելով որ նորընտրի նախագահը ի վիճակի պիտի ըլլայ կենսագործելու իր խոստացած փոփոխութիւնները:

ՆՇԱՆԱԿԵՐ ՄԱՍԻՍ

ԸՍՏ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՈՒՄ ՉԻ ՆՇԱՆԱԿԵՐ ՅՈՂԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ

Ծ.Ն. Ապրիլ 27ին, Երեւանի Պետական Համալսարանի ուսանողներուն հետ իր հանդիպումին ընթացքին Ռուպերթ Քոչարեան Հայկական Յեղափոխութեան մասին խօսելով անգամ մը եւս թրքական իշխանութիւններու «բարի կամեցողութեան» երաշխիք մը չղած է, յորդորելով որ ցեղասպանութեան ճանաչումով իրաւական հարցեր պիտի չյառաջանան հողեր վերադարձնելու ուղղութեամբ...: Յեղափոխութեան ճանաչում չի նշանակեր թէ Թուրքիա պատրաստ է վերադարձնել պատմական Հայաստանի տարածքները: Այսօրինակ յայտարարութիւն մը պարոն «Նախագահ» մէկ քանի տարի առաջ «Մի. Էն. Էն.-Թուրք»-էն կատարած էր: Օրին երբ քննադատեցինք նախագահին ապագային կեցածքները, ոմանք վշտացան:

Վերջերս Դամասկոսի մէջ, Ապրիլ 24ի Հայկական Յեղափոխութեան ոգեկոչման հանդիսութեան երբ ներկայից գոյնացուցինք հայաձին վասակներէն, Դամասկոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան հաւատարմատարը անհանգստացաւ: Ահաւասիկ Երեւանի Պետական Համալսարանին մէջ Քոչարեան վերահաստատեց նախապէս իր արտայայտած համոզումը, որ Հայաստանի արտաքին քաղաքականութեան բնորոշ գիծն է, հայթոռք յարաբերութիւններու շրջապիծէն ներս:

Ռուպերթ Քոչարեան, մէկն է անկախ հայրենիքի այն վարիչներէն, որոնց համար հողային պահանջատիրութիւնը կամ ցեղասպանութեան ճանաչումն ու հատուցումը հայ ժողովուրդի միայն մէկ գանգուածին վերաբերող հարց է կարծես...: Անգամ մը եւս կը յիշեցնենք, մերօրեայ պետական այրերուն, հայ ժողովուրդը մէկ է, չկայ սփիւռքահայ կամ արեւելահայ կայ մէկ ժողովուրդ, մէկ դատ, մէկ պահանջատիրութիւն:

Ստորեւ, Երեւանի Պետական Համալսարանի ուսանողներուն հետ նախագահ Ռուպերթ Քոչարեանի ելոյթէն հատուածներ. «Իրականում, եթէ Թուրքիան ճանաչի ցեղասպանութիւնը, դա այսպէս, իրաւունքի ուժով, կամ ընդունման տրամաբանութիւնից այսպէս չի նշանակելու, որ ինքը պարտաւոր է անմիջապէս վերադարձնել այդ հողերը:

Այդպիսի իրաւական ուղղակի հետեւանքներ չեն առաջանալու: Սա է իրականութիւնը: Այլ հարց է, որ հայերը կարող են խօսել ընդհանրապէս կոմպենսացիաների (հատուցում) մասին, որ եթէ այդպիսի դէպք եղել է, սուսաններ կան, կայ մէկուկէս միլիոն զոհ, տեղահանուածներ եւ այլն, ապա պատրաստ է Թուրքիան քննարկել կոմպենսացիայի հետ կապուած ինչ որ հարցեր: Ինչ կարգի կոմպենսացիա՞ դա կարող է լինել բանակցութիւնների առարկայ: Թէկուզ դժուար է այսօր, նոյնիսկ այս պարագայում մտածել, որ Թուրքիա կարող է նման որեւէ նման քայլի գնալ: Բայց ուղղակի իրաւական հետեւանք դժուար թէ այստեղ առաջանայ», - ըսած է Ռուպերթ Քոչարեան:

Անդրադառնալով Թուրքիոյ Եւրոմիութեան անդամակցութեան առնչութեամբ Հայաստանի դիրքորոշումին Քոչարեան ըսած է. «Մենք դէմ չենք այդ անդամակցութեանը: Եթէ փորձենք զգացմունքայի հողի վրայ սա գնահատել, այդքան ալ հաճելի չէ դա յայտարարել, երեւի իւրաքանչիւր հայի մօտ որոշակի նախապաշարումի պարագայ այստեղ մենք ունենք ի հարկէ: Բայց ունենալ աւելի կանխատեսելի, աւելի թափանցիկ, աւելի ժողովրդավարական երկիր հարեւան. ի հարկէ աւելի նախընտրելի է մեզ համար: Եւ չենք նաեւ կասկածում, որ անդամակցութեան հարցը ստիպելու է Թուրքիայի աւելի ճիշդ գնահատել իր անցեալը, անցեալի մութ էջերը, որ կապուած են Հայկական Հարցի հետ, եւ ստիպելու են աւելի աքթիւ բարեփոխումներ իրականացնել մարդու իրաւունքներու, խօսքի ազատութեան ոլորտում եւ այլն», - ըսած է Քոչարեան:

Քոչարեան յայտարարած է, թէ Հայաստան պարզապէս դէմ կ'արտայայտուի Թուրքիոյ արտօնեալ անդամակցութեանը, երբ այդ երկիրը կ'անդամակցի պահանջներու ոչ ամբողջական փաթեթը բաւարարելով. «այսինքն յատուկ ռեժիմ անդամակցութեան, մենք համարում ենք, որ չպէտք է լինի: Այստեղ ենք մեր ընդդիմախօսում, բայց ընդհանրապէս կողմ ենք Թուրքիոյ անդամակցութեան», - ըսած է Քոչարեան:

«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

«ԻՐԻԵՒ ԱՐԾԻՒ»

Անդրանիկ, հայ ազատագրական շարժման ամենէն փայլուն եւ ժողովրդական դէմքը եղաւ: Ճակատագիրը սահմանած էր զինք ոչ միայն օտար բռնակալութեան մը դէմ գէնքով ծառանալու եւ դարեւրու ընթացքին կորաքամակ սորուկի վերածուած հայը ըմբոստ ու մարտունակ անհատակութեան մը կերպարանափոխելու առաքելութեան, այլ նաեւ հայուն մարտական, կորովի, անհասանջ ներկայացուցիչը ըլլալու փառքին:

Առաքելոց վանքի կուրէն մինչեւ Դիլմանի մեծ յաղթանակը, Շապին Գարահիսարի համեստ ընտանիքի մը զաւակ, այս Հերոսը ցոյց տուաւ նախ բովանդակ ազգին, ապա ամբողջ մարդկութեան որ արցունքն ու պաղատանքը չեն որ ազգ մը ոտքի կը պահեն եւ մարդկութեան մէջ արժանաւոր տեղ մը կուտան իրեն, այլ գէնքը ամենէն առաջ եւ բոլոր տեսակի այլ միջոցներէն վեր:

140 տարիներ առաջ աշխարհ եկած Հերոսը իր կեանքով ու գործով «Իբրեւ Արծիւ կը սաւառնի» ժամանակին վրայէն ու այնկոծ կեանքը իբրեւ անմեռ աւանդ կը փոխանցէ յետորդ սերունդներուն: Ու բովանդակ ազգը միշտ ու ամէն տեղ կ'ապրի իր «Քաջ Անդրանիկ»-ով ու օտար շատ մը ազգերու կողմէ իսկ որդեգրուած այդ անունով խորհրդանշուող փառքով ու հմայքով:

Մեծ է Հերոսին թողած առաս-

պելական դիւցազնութեան խորհուրդը, մեծ ու սքանչելի:

Սերունդներու ներշնչման հզոր աղբիւր է Անդրանիկին անունը ու անոր օրինակով Ազգն ու Հայրենիքը սիրելու եւ գերագոյն զոհողութիւնն իսկ ստանձնելու տենդը՝ անդիմադրելի:

Յուզումով ու հպարտութեամբ կ'երգենք Հայոց Ազգային Հերոսի փառքը, կ'ապրինք իր վսեմ օրինակով ու կը ձգտինք իր երազներու իրականացման:

Անցան տարիներ: Ազգային անզուգական ու անմոռանալի Հերոսին հետեւեցան նորեր ու անոնք ալ խիզախ թուիչքով ազատագրեցին Արցախի Շուշին, ապահովելով Ստեփանակերտի պաշտպանութիւնը ստոր թուրքերու «աղբարիկ» ազգերի վոհմակներու ուղմբակոծումներէն:

Շուշին ազատագրուեցաւ: Ազգային Հերոսին ոգին ժառանգեցին նոր բարձրաթուիչ

Արծիւներ, որոնք, Ազատ ու Անկախ Հայաստանի Հանրապետութեան կողքին, կերտեցին

Ազատ ու Անկախ Արցախի Հանրապետութիւնը:

Ազգային Հերոսին՝ անմահն Անդրանիկին հոգին կը խայտայ ի տես նոր հերոսներու սիրանքին, որոնք կը պաշտպանեն մայր հողը՝ յանուն Հայրենիքի ու Հայ ժողովուրդի բարօրութեան:

«ԼՈՒՍԱԲԱՅ» ԳԱՆԱՏԱ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ Է ԱԼԵՔՍԱՆՏՐ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

Այս քայլերով ինքը ապագայ իշխանութիւններին, որոնք իրեն ձերբակալելու են յետոյ, քարտ բլանշ է տալիս... Այսինքն՝ ինքն իր տակ փոս է փորում», աւելցուց Մանուկեան:

«Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննէսեան իր կարգին յայտարարեց. «Շարունակը կը շարունակուի, քանի ղեռ Հայաստանում ընտրութիւնների միջոցով ժողովրդի կամարտայատուցութեամբ իշխանութիւնը չի փոխանցուել գործողից նորին: Սա մարտահրաւէր է: Այս մարդուն կատամբ նման քայլը պարզապէս հայելին է Հայաստանի Հանրապետութեան, իր իշխանութիւնների»:

«Եթէ այս իշխանութիւնը մնալու է, այս դէպքերը անընդհատ լինելու են», - յայտարարեց ՀԺԿ-ի ղեկավար անդամ Ստեփան Զաքարեան: «Եթէ այս ընտրութիւններում ոչինչ չփոխուի, այս մարդկանց կարող է բաց թողնեն, բայց յետոյ կը բռնեն ուրիշներին»:

«Քաղաքացիական անհնազանդութիւն» շարժումի անդամներէն Ազգային ժողովի նախկին փոխխօսնակ կարապետ Ռուբինեան այս ձերբակալութեան մէջ այլ ենթատեքստ տեսնելով յայտարարեց. - «Այդ քաղաքական հետապնդումը կապուած չէ ընտրութիւնների հետ: Իրենք իրենց ներքին շուկան արդէն աւարտել են եւ բաշխել են տեղերը խորհրդարանում: Իրենց անհանգստ-

տութիւնը կապուած է հետընտրական գործընթացների հետ»:

Իր ձերբակալութեան մի քանի ժամ առաջ Արեքսանտր Արզումանեան մամլոյ ասուլիս հրաւիրելով յայտարարեց. «Ես որեւէ բան թաքցնելու ինդիք չունեմ, իմ գործունէութիւնն անցել է բոլորի աչքի առջեւ»:

«Խօսում են փողերի լուացման մասին, կազինոյում 2 միլիոն օրական մսխելը փող լուալ չի, իմ ստացած հոնորարները փող լուալ է», - հարց տուաւ Արզումանեան եւ շեշտեց, որ ինք օրէնքի հետ երբեք ինդիք չէ ունեցած եւ չի կրնար ունենալ:

Ալեքսանտր Արզումանեան լրագրողներուն տեղեկացուց, որ ինք Ապրիլի 24-ին գացած է Մոսկուա՝ Ելցինի յուղարկաւորութեան:

«Այդ օդանաւում եղել են տասնեակ մարդիկ, ովքեր ինձ ճանաչում են, անշուշտ, եւ որոնցից մի 15-ին ես եմ ճանաչում: Դա շատ նորմալ չուերթ է, բոլոր գործունեցող մարդիկ գնում են առաւօտեան չուերթով, վերադառնում են վերջինով: Դա շատ նորմալ պրակտիկա է, նոյնը ունէր եւ Շիրխանեանը, եւ շատ ուրիշներ, որ օդանաւում էին: Ես չեմ կարծում, որ մարդիկ օդանաւից իջնում են, ասում են, լուացքի մեքենայ կայ փող լուալու, եկէք գնանք փող լուանք: Սա բարսուրդ է», յայտարարեց նախկին նախարար Ալեքսանտր Արզումանեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to
Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name:-----
Address:-----
City:----- State:----- Zip Code:-----
Country:-----
Tel:----- Fax:-----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂՂԱՍԱՐԵԱՆ.

«ԵԹԵ ԿԵՂԾԻՔՆԵՐ ԼԻՆԵՆ, ԵՄ ԼԻՆԵԼՈՒ ԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ»

«Օրինաց երկիր» կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարեանը բացատրել է «Ազատութիւն» ռադիոկայանին: Ներկայացնում ենք հարցազրույցը՝ որոշ կրճատումներով:

Հարց. - Պարոն Բաղդասարեան, այս շաբաթուայ ընթացքում ե՛լ ընդդիմադիր, ե՛լ իշխանական կողմերից ամենաշատ հնչած հարցադրումը ձեր եւ Մեծ Բրիտանիայի փոխդեսպանի ապօրինի գաղտնալսում զրոյցի կապակցութեամբ հետեւեալ էր. - «Ինչո՞ւ Արթուր Բաղդասարեանը չի դիմում իրաւապահ մարմիններին՝ քրեական գործ յարուցելու պահանջով, իր իրաւունքները ոտնահարելու եւ օրէնքի խախտումով իրեն գաղտնալսելու համար»: Ինչո՞ւ չէք դիմում:

Ա. Բ. - Գիտէ՞ք, մենք բազմիցս խօսել ենք, որ Հայաստանում դատարանական համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի, եւ, այդ, շատ դէպքերում առանց փողի ու կաշառքի, առանց ծանօթի որեւէ ինչի ինչի լուծել հնարաւոր չէ: Սա ակնյայտ է, եւ այս մասին խօսում են գրեթէ բոլորը: Ինչի՞ մասին է խօսքը, ի՞նչ խորհրդաւորութեան: Ես հանդիպում եմ տասնեակ, հարիւրաւոր դիւանագետների հետ, միջազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ, ինչպէս ցանկացած այլ քաղաքական գործիչ, եւ վերցնել՝ ընտրութիւններից մի քանի օր առաջ սարքել ինչ-որ շուռ, բնականաբար, դրա պատճառը մէկն էր՝ «Օրինաց երկիր» կուսակցութեան աճող վարկանիշը, եւ ես չեմ էլ ուզում արդեն այդ հարցի մասին խօսել, որովհետեւ ես խօսել եմ սպառնիչ, ասել եմ յստակ: Ինչ վերաբերում է բուն գաղտնալսման վրաստին՝ շատ դատաւարտելի եւ վատ դրսեւորում է: Էլ չեմ խօսում, որ այդ գրույցը աղաւաղուել է տարբեր մեկնաբանութիւններով: Այսօր կարելի է ցանկացած գրույցի, ցանկացած տեսակետի աղաւաղում կատարել, առաջ ու հետ բերել եւ այլն: Այս երեւոյթը մենք միանշանակ համարում ենք դատաւարտելի:

Ինչ որ ես ասել եմ հրապարակայնօրէն, նոյնը ես ասում եմ ցանկացածին. այդ, Հայաստանում պէտք է անցկացուեն ազատ, արդար, միջազգային չափանիշներին համապատասխանող ընտրութիւններ:

Հարց. - Այնուամենայնիւ, ես չստացայ իմ հարցի պատասխանը: Դուք անընդհատ շեշտում եք, որ «Օրինաց երկիր»-ը փորձում է կերտել օրէնքի երկիր. մի՞թէ ձեր երազած օրինաց երկրում այսքան հանդուրժող պէտք է լինեն գաղտնալսումների, միմեանց հրապարակաւ «դաւաճան» անուանելու եւ անբաստանելու երեւոյթների հանդէպ: Ինչո՞ւ չէք դիմում դատարան:

Ա. Բ. - Ես արդեն պատասխանեցի՝ որովհետեւ Հայաստանում արդարադատութիւնը այն հիմքերի վրայ չէ: Եւ եղել են դէպքեր, որ մենք դիմել ենք, եւ դա ուղիղ հակառակ ազդեցութիւնն է ունեցել:

Հարց. - Եթէ ինձ են գաղտնալսում՝ դա մի հարց է, երբ ձեզ են գաղտնալսում՝ դա ուրիշ հարց է: Ստահագութիւնը այստեղ կարող եմ ձեւակերպել այսպէս. դուք քաղաքական գործիչ եք, ապաւինում եք դրսի ուժին: Նախ՝ հայ ժողովուրդը պատմականօրէն գիտէ, որ լաւ չէ, վատ բաների է հանգեցնում, երբ հայերի ղեկավարները ապաւինում են դրսի ուժերին: Ձեզ այդ դրսի ուժի օգնութեամբ կը յաջողուի մտնել խորհրդարան, իսկ

յետոյ՝ նաեւ դառնալ Հայաստանի նախագահ: Եւ այն ժամանակ այդ դրսի ուժերը՝ Արեւմուտքը, որը ձեզ բերել է, կասի՝ «Վերցրէք եւ ստորագրէք Պարբաղի այս փաստաթուղթը»: Սօտաւորապէս սա է մտահոգութիւնը ե՛լ քաղաքական գործիչների մօտ, ե՛լ հասարակութիւնում:

Ա. Բ. - «Օրինաց երկիր»-ը հայ ազգի, հայ հողի ծնունդ է: Մենք տասնամեայ քաղաքական կենսագրութիւն ունեցող քաղաքական կառույց ենք, որը այսօր ունի 110 հազար անդամ: Այսինքն՝ մենք ապաւինում ենք մեր ժողովրդին: Այո, բոլորը պէտք է իմանան, որ ես ունեմ լաւ ընկերներ Հայաստանից դուրս, իմ բոլոր միջազգային ելույթները ժամանակին ցուցադրուել են հեռուստատեսութեամբ, տպագրուել են մամուլում: Ես բոլոր միջազգային առեւտրային պաշտպանել եմ հայ ազգի դատը, Ղարաբաղի ինչի-րը, բոլոր այն ինչի-րները, որոնք կանգնած են մեր երկրի, մեր պետութեան առաջ:

Իսկ կապերը մենք պէտք է ծառայեցնենք հայ ազգի հզօրացմանը: Այսօր միջազգային կազմակերպութիւններում, տարբեր միջազգային քաղաքական կառույցներում մեր ունեցած ընկերական, քաղաքական կապերը պէտք է ծառայեցուեն Հայաստանի Հանրապետութեանը, եւ մենք այսպէս ենք առաջնորդուում:

Հարց. - Անցած կիրակի օրը յայտարարեցիք, թէ վտանգուած է ձեր անվտանգութիւնը: Ի՞նչ որոշակի ահազանգեր կային նման պնդում անելու համար:

Ա. Բ. - Այո, այդ օրը ես երկու յայտարարութեամբ հանդէս եկայ, որ եթէ ժողովուրդը վատահի մեզ, ապա ես մասնակցելու եմ առաջիկայ նախագահական ընտրութիւններին, եւ երկրորդը՝ այն, ինչ այսօր տեսնում ենք: Տեսէ՞ք՝ ինչ դառը ճանապարհ անցաւ «Օրինաց երկիր»-ը: Ես չեմ ցանկանալ, որ այն, ինչ մենք տեսանք, տեսնի իւրաքանչիւր իմ հայրենակից: Որովհետեւ տարբեր չեմ ուզում կոնկրետ օրինակներից խօսել: Դրա համար ասում եմ՝ բերէ՞ք ազատ մրցակցութիւն կազմակերպէ՞ք: Այսօր քարոզարշաւը, որը Հայաստանում ընթանում է, իր բոլոր լաւ ու վատ կողմերով, ընդհանուր գնահատականը այն է, որ բոլոր քաղաքական ուժերին հնարաւորութիւն տրուում է ներկայացնելու իրենց ուղերձը: Սա փաստ է, սա դրական է, եւ ես մատնանշում եմ: Բայց բազմաթիւ բացասականները, որ կան, չենք կարող չասել: Ինչո՞ւ չեն հրաւիրում, ինչո՞ւ հնարաւորութիւն չեն տալիս խօսելու, մեր ուղերձը հասցնելու, ինչո՞ւ են քաղաքական գովազդի գինը սահմանել 350-400 դոլար մէկ րոպէն, երբ թոշակն ու աշխատավարձը 10 անգամ պակաս են:

Հարց. - Ի՞նչ կ'ստք Շաւարշ Քոչարեանի՝ վերջերս հրապարակած գնահատականի մասին, որ դուք անկեղծ քաղաքական գործիչ չէք՝ աջ ձեռքով այլ բան եք անում, ձախով՝ այլ:

Ա. Բ. - Քաղաքական գործիչ անկեղծութիւնը որոշում է ժողովուրդը: Ես հրաւիրում եմ ձեզ մարդկանց հետ հանդիպումների, տեսէ՞ք՝ մարդիկ ինչպէս են գնահատում իւրաքանչիւր քաղաքական գործիչին:

Հարց. - Դուք վերլուծել էք՝ ինչո՞ւ այսպէս եղաւ, ինչո՞ւ յանկարծ

փորձութիւնների ենթարկուեց «Օրինաց երկիր»-ը, ինչո՞ւ այսքան վատացան յարաբերութիւնները նախագահի եւ Արթուր Բաղդասարեանի միջեւ, երբ դուք պաշտպանում էիք նախագահին, իսկ ամէն ինչ, ի վերջոյ, աւարտուեց նրանով, որ նախագահը յայտարարեց, որ դուք «դաւաճանական դրսեւորումներ» էք ցուցաբերում:

Ա. Բ. - Ես արդեն հրապարակաւ պատասխանել եմ հնչեցուած բոլոր կարգի այդ հարցադրումներին, եւ ես, այո, գտնում եմ, որ երկիրը դաւաճանում են բոլոր նրանք, ովքեր տեսէք ինչ վիճակի մէջ են դրել շատ ու շատ մարդկանց: Երկիրը դաւաճանում են բոլոր նրանք, ովքեր այսօր փոխանակ զբաղուեն ազնիւ, արդար քաղաքական մրցակցութեամբ, պատուիրած յօրուածներ են արքում, վերցնում՝ հեռուստատեսութիւններով ընթերցում են, փորձում են մարդկանց վարկաբեկել: Իսկ ի՞նչ տեղի ունեցաւ: Այո, ժամանակին մենք հրապարակայնօրէն աջակցել ենք: Իմ պատասխան խօսքում էլ եմ ես այդ մասին ասել, եւ ասելին չեմ ուզում ասել եւ ի՞նչն է խօսել այլ ինչի-րների մասին: Ժամանակը եւ Աստուած թող լինեն դատաւոր՝ իւրաքանչիւր մարդու քաղաքական, հրապարակային գործունէութեան:

Հարց. - Մի քանի օր առաջ մեր հիւրն էր Վահան Յովհաննիսեանը՝ Դաշնակցութիւնից, նա էլ նոյն բանը ասաց, որ իրենք ընդդիմութիւն էին կառավարութիւնում: Ստացուեւ է, որ դուք էլ էք ընդդիմութիւն եղել, Դաշնակցութիւնն էլ է ընդդիմութիւն եղել, բա ո՞վ է «դիմութիւն» եղել այն ժամանակ:

Ա. Բ. - Ինձ թւում է, բոլորին էլ հասկանալի է՝ Դաշնակցութիւնը իշխող քաղաքական կուսակցութիւն է այսօր, կառավարութեան մէջ ներկայացուած է, ունի չորս նախարարներ, տասնեակ փոխնախարարներ, փոխմարզպետներ, եւ այլն: Իսկ եթէ Դաշնակցութիւնն էլ է խօսում առկայ թերութիւնների, սխալների մասին՝ շատ լաւ է, պէտք է ողջունել:

Հարց. - Սէկ շաբաթ անց որքանով ձեր թիւը կը կարողանայ պահպանել իր ստացած ձայները: Փորձը ցոյց է տալիս, որ ձեր թիւում ընդգրկուած մարդիկ, մեղմ ասած, հաստատակամութեամբ չեն առանձնանում, ինչը ապացուցում է թիւ 41 ընտրատարածքում ձեր թեկնածու Յակոբ Յակոբեանի հետ կատարուածը, նաեւ ընտրական յանձնաժողովների անդամների հետ կապուած վկայութիւններ կան:



Ա. Բ. - «Օրինաց երկիր» կուսակցութեան ղեկավար պաշտօններից՝ բոլոր յանձնաժողովների նախագահներին, տեղակալներին եւ քարտուղարներին պարտադրաբար քուէարկեցին եւ հանեցին: Եւ մեր շատ անդամներ իրենք են կամովին հրաժարուել՝ մինչեւ այս նոր ընտրութիւնները ես ի նկատի ունեմ: Ինչ վերաբերում է սկզբունքայնութեանը՝ «Օրինաց երկիր» կուսակցութիւնը այսօր բազմահազար սկզբունքային, մարտունակ մարդկանց բանակ է: Այսօր «Օրինաց երկիր»-ը ունի 110 հազար անդամ, այսօր «Օրինաց երկիր»-ը բոլոր յանձնաժողովների տեղերում ունի նշանակուած նուիրեալներ, բոլոր տեղերում մենք ունենք վատահուած անձինք, եւ մենք պահելու ենք մեր ձայները, մենք կուիւ ենք տալու մինչեւ վերջ:

Հարց. - Յիշեցնեմ անցած ընտրութիւնները, երբ դուք բողոքեցիք, որ ընտրութիւնները այնքան էլ լաւ չեն անցել, Կենտրոնական ընտրական յանձնաժողովում ձեր ներկայացուցիչը նոյնիսկ կարծեմ չէր էլ ուզում ստորագրել: Դրանից յետոյ մտաք կոալիցիայի մէջ եւ դարձաք իշխանութիւն, այսինքն՝ համագործակցեցիք նրանց հետ, ու մեղադրում էիք: Այս անգամ նոյնը չի՞ լինի:

Ա. Բ. - Այո, անցած ընտրութիւններում մենք յայտարարութիւն արել ենք, մեր ձայները կեղծել էին, բայց մենք թուով երկրորդ կուսակցութիւնն էինք: Իշխանութիւնը որոշում է ժողովուրդը. եթէ «Օրինաց երկիր»-ը լինէր վեցերորդ տեղը, մենք չէինք կարող իշխանութեան մաս կազմել: Այսօր տարբեր կեղծ սոցիոլոգիական հարցումներ են արւում ու հրամցում հանրութեանը: Մենք էլ ենք կազմակերպում, տարբեր այլ կառույցներ էլ են կազմակերպում: Այսօր «Օրինաց երկիր»-ը ունի Հայաստանում ամենաբարձր քաղաքական վարկանիշը: Ես դա յայտարարում եմ՝ հիմք ընդունելով այն թուերը, որ մենք ունենք, այն

Շաբ.ը էջ 19

Advertisement for Chiropractic Health Center. Text includes: 'Eliminate Pain Naturally without drugs. without surgery', 'Effective Treatment For: Low back pain, Sciatica, Hip and Knee Pain, Headaches, Carpal tunnel, Neck pain, Arthritis', 'Rehabilitation Services: Sports Injuries, Auto accidents, Post surgical rehabilitation', 'Wellness programs: Weight Loss, Nutritional counseling, Lifestyle counseling, Stress relief, Stress management', 'Tsolag J. Kazandjian Doctor of Chiropractic', 'CALL TODAY: 626.821.9544', 'Most Insurance plans accepted', 'Same Day Appointments available', '623 West Duarte Road Suite 5, Arcadia, CA 91007'.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵԼՑԻՆԵՆ ԳԱՍՊԱՐՈՎ, ՓՈՒԹԻՆԵՆ ԱՆՑՆԵԼՈՎ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԻՆՆԵՐ

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի նախաձեռնությամբ կայացող «Հայ պատմական քաղաքներ, նահանգներ եւ համայնքներ» շարքին հերթական գիտաժողովը տեղի ունեցաւ Մարտի երկրորդ կիսուն, Գալիֆորնիոյ համալսարանին մէջ, Լոս Անճելըս (UCLA), նուիրուած Հնդկաց Ուիլիամսի հայ համայնքներու պատմութեան ուսումնասիրութեան: Այս առթիւ, գիտաժողովի կազմակերպութիւնը միանաբար իրագործած են Յովհաննիսեան եւ վերջերս իր տրոֆորական տիտղոսին տիրացած Սեպուհ Ասլանեան (Գորումպիա համալսարանէն, ներկայիս դասախօս Գալիֆորնիոյ համալսարան, Ըրվալս): Հանդիպումը հովանաւորութիւնը կը վայելէր համալսարանի Արդի Հայոց Պատմութեան Հայ Կրթական Հիմնարկութեան անուան ամպիոնին, ինչպէս նաեւ նոյն համալսարանի Պատմութեան բաժանմունքին, Մերձարեւելեան Ուսումնաց Կեդրոնին, Հնդկաստանի եւ Հարաւային Ասիոյ Ուսմանց Կեդրոնին, Եւրոպական ու Եւրասիական Ուսմանց Կեդրոնին եւ ՀԲԸՄԻ հարաւային Գալիֆորնիոյ վարչութեան: Գիտաժողովի սրահին մէջ միաժամանակ ցուցադրութեան դրուած էր Գալիֆորնիոյ Տէլվիս քաղաքին Ռիչըրտ եւ Անն Էլիզաբէթ Էլիզաբէթի նոյն նիւթին շուրջ կազմած լուսանկարներու հաւաքածոն: Ինչպէս արդէն աւանդութիւն է, տարբեր ելոյթները լսելու եւ վիճարկումներուն մասնակցելու համար համալսարանի Եանկ սրահը եկած հանրութիւնը կը տարուբերէր 150էն 400ի միջեւ: Դիւրին է սովորութեան մասին խօսիլը, ու թերեւս մասնակիցներու եւ մասնագէտներու ուշադրութիւնը արդէն իսկ շեղած ըլլայ այն երեւոյթէն, որ 16 յաջորդական գիտաժողովներու կայացումը աննախընթաց իրողութիւն մըն է ոչ միայն հայագիտական կալուածին մէջ, այլեւ ընդհանրապէս նախանձելի՝ գիտական շատ մը շրջանակներու համար: Ատոր վրայ պէտք է աւելցնել նաեւ այն, որ այդպիսի ձեռնարկները ընդհանրապէս բազմամարդ կազմակերպութիւններու գործը կ'ըլլան, իսկ այս պարագային Յովհաննիսեան ցարդ գրեթէ առանձին է որ գլուխ հանած է այս յարատեւ նախաձեռնութիւնը, միշտ իր պատկանած համալսարանի հովանաւորութեան տակ: Այս գծով, ողջունելի է վերջին հանդիպումին մէջ նոր ուժի մը՝ Սեպուհ Ասլանեանի մասնակցութիւնը, որ բացի ենթակային համար յաջողագոյն փորձառութիւն մը հանդիսանալէ, հայագիտութեամբ հետաքրքրուող համայնքին վստահութիւն կը ներշնչէ ապագայի կարելիութիւններուն առնչութեամբ:

Հայ առեւտրական կեդրոններու կազմաւորման մասին, սկսելով 1512-էն իսկ անոնց մասին փորթուկալցի ճանապարհորդի մը կատարած լիշատակութենէն: Մարգիսեան բացատրեց թէ անոնց գլխաւոր գործունէութիւնը կը կազմէին Հնդկաստանի եւ Չինաստանի միջեւ փոխանակութիւնները, ու առաջադրեց որ այս հայերու առեւտրական յաջողութիւնները կարելի դարձան ըստ այսօրուան եզրաբանութեան՝ անոնց «անդրազգային» ընդունակութիւններուն շնորհիւ, որոնց կարգին կարելի է թուել բազմակողմ հաղորդակցութեան կարելիութիւնը, եւրոպացիներու եւ տեղացիներու միջեւ միջին տեղ մը գրաւելուն պատճառով երկուքին կողմէ ալ նուազ «օտար» նկատուելու պարագան, ինչպէս նաեւ անոնց մօտ կայսերապաշտական կամ ծաւալապաշտ նպատակներու բացակայութեան առթած վստահութիւնը: Ուշալէսեան համալսարանէն իրաւաբան Ռիչըրտին նիւթը խորագրուած էր «Յրօնքէն Ազգ»՝ հայկական սփիւռքային մտորումներ»: Յիշելէ ետք այն ընդունուած կարծիքը, որ հայ ազգային գիտակցութեան սկիզբը կը նշուի ԺԸ դարու շարժումներով՝ Սիւնեաց ապստամբութիւններէն Միւթարեաններու գործունէութիւնը, Թէօթօթեան նշեց թէ այս գործընթացի կարգ մը հիմնական հանգրուանները իրականացան սփիւռքի մէջ, որոնց մէջ յատուկ




Խմբանկար UCLA-ի Գիտաժողովին ելոյթ ունեցած դասախօսներու

կարեւորութիւն կը ներկայացնէ Մատրասի մէջ 1773-83ին ձեւաւորուած Որոգայթ Փառաց գիրքը, հեղինակութեամբ Յակոբ Շահամիրեանի եւ այլոց: Հատորը գետեղելով տուեալ շրջարկին մէջ, Թէօթօթեան վեր առաւ այն յատկանիշները որոնք զայն հայ ազգայնակաւորութեան յայտնութեան ուշագրաւ փաստաթուղթի մը կը վերածեն. այսպէս, հետաքրքրական են գրքի լիշատակած սահմանադրական եւ օրէնսդրական տրամադրութիւնները, յետագայ ամերիկեան սահմանադրութիւնը լիշեցնող մանրամասնութիւնները, եւ նոյնիսկ դեռ չաւարտած ամերիկեան յեղափոխութեան եւ ճորճ Ուաշինկթընի մասին ակնարկները: Գալիֆորնիոյ համալսարանէն

(Լոս Անճելըս), Փիթըր Գաուլի իր ելոյթով նախ ներկայացուց ժամանակի հնդկահայ ընկերային եւ մշակութային կեանքը, որ իր բազմամիլիոնատէրերով, ունեւոր միջին դասակարգով եւ անգամ չբաւոր անդամներով յարմար շուկայ եւ միջավայր ստեղծած էր եւրոպական ազդեցութեամբ խմորուած սովորութիւններու արմատաւորումին եւ մասնաւորաբար պարբերական մամուլի ստեղծման, իրական սեռի անդամներու դպրոցական կրթութեան եւ մշակութային կազմակերպութիւններու առկայութեան, որոնք ենթահող պիտի հանդիսանային համայնքի ընկերամշակութային կարեւոր հաստատութիւններէն թատ-

Մար. ք էջ 17

The Glendale Police Department is Looking for Bilingual Armenian/English Police Officers



Salary: \$5,178 to \$6,764 per month

The Police Department prides itself on providing the best police service to the citizens of Glendale. We are looking for dynamic individuals who are interested in serving their community and continuing the excellence of the Glendale Police Department.

The next written test date is June 19, 2007 Applications are due by May 18, 2007

Police officers with other agencies are always encouraged to apply to join the Glendale Police Department.

For more information, please contact us: Glendale Police Department – Recruitment Unit 131 North Isabel St. Glendale, CA 91206 Phone: (818) 548-3117 Email: gpdrecruiting@ci.glendale.ca.us Website: www.joinGPD.com

ԳԱՂՈՒԹՅՆԵՐՈՒ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԵՆ ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿՕՍՈՒԹԻՒՆ Գիտաժողովի նիւթին մասին ներածականով մը բացաւ Ռիչըրտ Յովհաննիսեան, որմէ ետք կայացաւ հայ գաղութներու եւ մշակութային կեանքի նուիրուած առաջին նիստը, Հարվըրտ համալսարանէն Էնկալնիկ Հոյի ուշագրաւ ղեկավարութեամբ: Առաջին գեկուցումը ներկայացուց Սմիթ Գոլմէն Մարկարէթ Սարգիսեան, որ սկզբնական տեղեկութիւններ տուաւ հարաւարեւելեան Ասիոյ

ՊԱՐԻՍՏԵԱՆ ԹԵՄԻ 80ՐԴ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏՊԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թեմական Պատգամաւորական 80րդ ժողովը տեղի ունեցաւ Մայիս 4-5 2007ին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի նախագահութեամբ, փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ յատկապէս Թեմիս Համագումարներուն մասնակցելու համար ժամանած էին Արժ. Տ. Ղեւոնդ Քննչ. Մայիլեանը եւ Արժ. Տ. Վահրամ Քննչ. Մելիքեանը:

Պատգամաւորները հանգամանօրէն նկատի առին հետեւեալ տեղեկագիրները, որոնք արդէն իսկ սպուած էին ժողովի գրքոյկին մէջ.

Թեմական Խորհուրդ, Առաջնորդարանի վարիչ Տնօրէն, Կրօնական Բաժանմունքի Առաքելութիւն, Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ, Տիկնանց Միութեան Կեդ-

«Ջուր տանք հաւատքի ծառին» բնաբանով, Սրբազան Հայրը իր հոգեւոր պատգամը տուաւ Պատգամաւորներուն՝ անդրադառնալով հետեւեալ կէտերու վրայ.

Ա.- Սերտ յարաբերութիւն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ:

Բ.- Շրջանային Առաջնորդական Փոխանորդներու նշանակում:

Գ.- Հոգեւոր եւ Այցելու Հովիւներու նշանակումներ:

Դ.- Նոր Ծուխերու եւ նորակազմ (Mission Parishes) Ծուխերու հաստատում:

Ե.- Հոգեւորականաց Վարչական ժողով:

Զ.- Ձեռնադրութիւններ:

Է.- Հովուական Այցելութիւններ:

Ը.- Առաջնորդանիստ Մայր Տաճարի Կառուցում:

Թ.- Հաստատում «Առաջնորդի Բարեկամներու Շրջանակի»:



րոնական Խորհուրդ, Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմին, Էջմիածնի Փոքրիկներու Ֆոնտ, Հոգեւորականաց Վարչական Խորհուրդ, Հոգեւորականաց Թոշակ, Հայց. Եկեղեցւոյ ձամբարի վարչական Մարմին, Առաջնորդարանի Ամառնային ձամբար, Երիտասարդաց Վարիչ, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւն, Հայ Քրիստոնէայ Առաքելութիւն Դէպի Հայաստան (CYMA) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ-Յովսէփեան Դպրոց, Պետութեան հետ փոխ յարաբերութեան յանձնախումբ, Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբ, Հայց. Եկեղեցւոյ Դպրաց Դասերու Միութիւն, Առաքել եւ Շաքէ Աղա-Սարգսեան Գրադարան, «Մայր Եկեղեցի» Պաշտօնակէտք, Առաջնորդարանի Պատկերազարդ Պատի Օրացոյց եւ հրատարակութիւններ:

Հայց. Եկեղեցւոյ Մնայուն Հիմնադրամ, Խնամակալութեան Ծրագիր, «Քրիսմըս» ձաշկերոյթ-Պարահանդէս, Հայ Արհեստագործներու Միութիւն, Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունք, Ուխտագնացութիւն Դէպի Հայաստան, Սուրբ Ներսէս Աստուածաբանական Ընծայարան, (Նիւ Եորք), Թեմի հաստատման 80ամեակի Յանձնախումբ, Գէորգեան Հոգեւոր ձեւարան, «Մեր Տուն» Ծրագիր, Թեմական Խորհուրդի Նիւթական Տեղեկագիր, Կանոնադրութեան մէջ Բարեփոխման Առաջարկ:

Հիւրաբար Թեմն այցելող Արժ. Տ. Վահրամ Քննչ. Մելիքեան Վեհափառ Հայրապետին Օրհնութիւնները փոխանցելէ ետք, կարգաց Նորին Սրբութեան ղրկած պատգամը՝ յաջողութեան իր բարեմաղթութիւնները յայտնելով Համագումարին:

Առաջնորդ Սրբազան Հօր Տաճարեկան Տեղեկագիրը Հայերէնով եւ Անգլերէնով գրքոյկի ձեւով սպուած բաժնուեցաւ Պատգամաւորներուն: Սրբազան Հօր ներկայացուցած մանրամասն տեղեկագիրը գնահատութեամբ եւ երախտագիտութեամբ ընդունուեցաւ:

Ժ.- Խնամակալութեան Ծրագիր:

Ժա.- Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունք

Ժբ.- Առաջնորդարանի յարաբերութիւնը համայնքային կազմակերպութիւններու հետ:

Ժգ.- Թեմի հաստատման 80ամեակի հանդիսութիւններ:

Ժդ.- Յատուկ ձեռնարկներ Առաջնորդարանի կողմէ, միջ-եկեղեցական, պետական, մշակութային:

Ժե.- Միջ-եկեղեցական Յարաբերութիւններ:

Ժզ.- Հրատարակութիւններ:

Ժէ.- Հայաստանեան Ծրագիրներ:

Պատգամաւորները միաձայնութեամբ վաւերացուցին Թեմական Խորհուրդի կողմէ ներկայացուած 2007-2008 թուի տարեկան պիւտճէն:

Պատգամաւորական ժողովի Երրորդ Նիստը գումարուեցաւ Շաբաթ, Մայիս 5ին, առաւօտեան, Առաջնորդ Սրբազան Հօր Բացման Աղօթքով:

Օրուան Հոգեւոր Պատգամը տուաւ Փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Հոգշ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան՝ շեշտելով նուիրումի եւ Հայց. Եկեղեցւոյ հանդէպ ունեցած բոլորիս ծառայափրութեան ոգին: Իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, նորանոր յաջողութիւններ մաղթեց Թեմական Խորհուրդին:

Պատգամաւորական ժողովի աւարտին, Գանձապահ Պէն Գրիգորեան պատգամաւորներուն ներկայացուց վեց միլիոն տոլարի փոխատուութիւն մը ստանալու առաջարկը՝ Մայր Տաճարի շինարարութեան համար, եթէ հարկաւոր նկատուի: Պատգամաւորները, որոշ լուսաբանութիւններէ ետք, սուին իրենց համաձայնութիւնը:

Շնորհակալութեան եւ Գնահատութեան Յանձնախումբի տեղեկատուութեան Յանձնախումբի տեղեկա-

ԳՐԱԿԱՆ ԸԱՆԴԵՍ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՐՐԱՇԱՍ ՏԻԼԱՆԵԱՆԻ «ԿԱՆՉ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ» ԸԱՏՈՐԻՆ

Մաշտոց Գոլէճի կազմակերպութեամբ, Ջորջթաքթի, Մայիս 2ին, երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ, Կլէնտոնի Կեդրոնական Հանրային Գրադարանին հանդիսարահին մէջ տեղի ունեցաւ գրական յատուկ ողջունահանդէս մը՝ նուիրուած մշակութային-հասարակական եռանդուն գործիչ հանգուցեալ Աբրահամ Տիւլանեանի, յետ մահու իր «Կանչ Խաղաղութեան» հատորին հրատարակութեան առիթով: Բանաստեղծութիւններու այս գեղեցիկ հաւաքածոն լոյս տեսած է «Ապրիլ» հրատարակչատունէն՝ մեկենասութեամբ հանգուցեալին երախտաշատ գաւկին եւ իր ազնիւ կողակիցին՝ Տէր եւ Տիկ. Արմէն եւ էլզա Տիւլանեանի:

Ողջունահանդէսի բացման խօսքը կատարեց Մաշտոց Գոլէճի նախագահ եւ օրուան հանդիսավար՝ դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան: Ան բարձրօրէն գնահատեց Տիւլանեան ամոլին կատարած կարեւոր ներդրումը մեր գրական անդամանին, իրենց հօրը տաղանդաշատ գրչին պատկանող բանաստեղծական գեղեցիկ հատորի մը մեկենասութիւնը ստանձնելով:

Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցան Մաշտոց Գոլէճի հայագիտութեան բաժանմունքի ատենապետ եւ դասախօս՝ դոկտ. Օննիկ Հայրապետեան, հանրածանօթ հեղինակարուեստագիտուհի՝ դոկտ. Սոնիա Մկրեան եւ երիտասարդ մտաւորական-դաստիարակ Պրն. Հրաչ Սեփեթեան: Իրենց ելոյթներուն մէջ յարգելի բանախօսներ արժեւորեցին հանգուցեալ Աբրահամ Տիւլանեանի գրական-մշակութային վաստակը, ինչպէս նաեւ անոր հեղինակած սակայն մինչեւ վերջերս անտիպ մնացած բանաստեղծութիւններու հաւաքածոն, յայտնելով իրենց խանդավառութիւնը, որ շնորհիւ հանգուցեալի գաւակներուն՝ գրասէր հասարակութիւնը առիթն ունի յետ մահու վայելելու Աբրահամ Տիւլանեանի գրչին արգասիքը:

Հանգուցեալի փեսան՝ հանրածանօթ ճարտարապետ Դանիէլ Թիւֆէնքեան, գեղեցիկօրէն ներկայացուց Աբրահամ Տիւլանեանի կենսագրութիւնը մերթ մերթ ցուցադրելով անոր կեանքը պատկերացնող հետաքրքրական նկարներ պաստառի վրայ: Աբրահամ Տիւլանեան ծնած է Մարաշ, 1914ին, եւ մեծ Եղեռնի ճգնաժամային պայմաններու մէջ հազիւ 2 տարեկան մամուկ հասակին կը կորսնցնէ իր ընտանիքին մեծ մասը, անցնելով իր մանկութիւնն ու պատանեկութիւնը որբանոցներու մէջ: Լիբանանի մէջ ան հիմը կը դնէ վերածնունդ Մշակութային Ընկերակցութեան, կազմակերպելով բազմաթիւ մշակութային-գրական ձեռնարկներ: Ան նաեւ ունեցած է բեղուն գրական գործունէութիւն, ստորագրելով այլազան յօդուածներ լիբանանահայ մամուլին մէջ: Լիբանանի քաղաքացիական պատերազմի ծանր պայմաններու բերումով Տիւլանեան ստիպուած կ'ըլլայ իր ընտանիքով փոխադրուիլ Գալիֆոնիա: Ան իր մահականացուն կը կնքէ Նոյեմբեր 14, 1995ին, շրջապատուած իր հարազատներով:

Օրուան գլխաւոր բանախօսն էր վաստակաշատ ճարտարապետ Ժիրայր Թիւթիւնեան, որ բացառիկ խնամքով պատրաստուած ելոյթով մը ծանօթացուց հատորը: Պրն. Թիւթիւնեան պատկերազարդ

վերլուծումներով ներկայացուց նմոյշներ հանգուցեալ Աբրահամ Տիւլանեանի «Կանչ Խաղաղութեան» բանաստեղծութիւններու հատորէն, շեշտելով գիրքի բովանդակութեան մաս կազմող հետեւեալ երեք գլխաւոր մասերը. ա) Երգ Միւրոյ ու Միութեան, բ) Երազային Հայաստան եւ Լիբանան եւ գ) Խաղաղութիւն: Պրն. Թիւթիւնեանի տպաւորիչ ելոյթը արժանացաւ ներկաներու միահամուռ բարձր գնահատանքին: Ան նաեւ ստանձնած էր հատորին կողքի գեղեցիկ պատրաստութիւնը՝ խաղաղութեան խորհրդանշանի շը հանդիսացող աղաւնիի մը պատկերով:

Գեղարուեստական ճոխ յայտագրի համադրումը վստահուած էր Օր. Լենա Թիւֆէնքեանի, հանգուցեալի բազմատաղանդ արուեստագիտուհի թոռնիկին: Օր. Մարիէթ Միւստեան եւ Օր. Լենա Թիւֆէնքեան հետաքրքրական բացառիկ մեկնաբանութիւնով ներկայացուցին «Սարգարապատ», «Երեւան էրբուհի» եւ «Ջուր Կու Գայ վերի Սարէն» մեծ ժողովրդականութիւն վայելող երգերը: Հանգուցեալին պարմանուհի թոռնիկը՝ Լորինա Տիւլանեան ապրումով արտասանեց իր մեծ հօր «Նոր Երգ» բանաստեղծութիւնը: Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցի արժանաւոր շրջանաւարտներ եւ համայնքիս մշակութային կեանքը շարունակաբար ճոխացնող արուեստագէտներ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Ժաննա Յովհաննէսեաններ տպաւորիչ մակարդակով ներկայացուցին Արշակ Բ. Օփերայէնի հատուած մը նաեւ իտալական երգ մը: Հանգուցեալի շնորհալի արուեստագիտուհի դուստրը՝ Տիկ. Ատրինէ Թիւֆէնքեան եւ յայտնի մենակատար եւ մանկավարժուհի Տիկ. Յասմիկ Պարան, ընկերակցութեամբ Օր. Լենա Թիւֆէնքեանի, գեղեցիկ գուգերով մը ներկայացուցին Աբրահամ Տիւլանեանի «Օրհնէ Աստուած» բանաստեղծութիւնը, որու երաժշտական յօրինումը կատարած է Լենա Թիւֆէնքեան:

Յանուն Տիւլանեան ընտանիքին՝ Տիկ. Ատրինէ Թիւֆէնքեան շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ յայտնելով իր երախտագիտութիւնը Մաշտոց Գոլէճին եւ յայտագրին մաս կազմող բոլոր բանախօսներուն եւ արուեստանուիրներուն: Իր հօրը յիշատակին նուիրուած հատորին ազդեցիկ վերջաբանը «Խօսիր Հայրիկ» խորագրով կը պատկանի Տիկ. Թիւֆէնքեանի գրչին ինչպէս նաեւ հատորին ետեւի կողքը գարգարող արուեստի գործը: Բեմը յարգարուած էր Տիկ. Թիւֆէնքեանի տաղանդաշատ վրձինին արտայայտութիւններ ներկայացնող նկարներով:

Ողջունահանդէսի փակման խօսքը կատարեց դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան, ու ապա հրաւիրեց Արժ. Տ. Զաւէն Ա. Քննչ. Տէմիրճեանը, որ իր կարգին ողջունեց հատորին ծնունդը եւ Տէր եւ Տիկ. Արմէն Տիւլանեաններու ցուցաբերած ազնիւ հոգին եւ անոնց տածած սէրն ու յարգանքը հանդէպ իրենց հօր: Տէր Հօր Պահպանիչով վերջ գտաւ օրուան բովանդակալից յայտագիրը, որմէ ետք ներկաներ վայելեցին Տիւլանեան ընտանիքին ճոխ հիւրասիրութիւնը ինչպէս նաեւ իրարու հետ հաղորդակցութեան գեղեցիկ պահ մը:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՐԵԳ» ՊԱՐԱՆՈՒՄԲԸ ԶՄԱՅԵՑ ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅՈՒԹԻՒՆԸ

Ներլիբանանեան հակամարտութեան անակնկալներով չդի այս օրերուն, տնտեսական, քաղաքական, ընկերային ու ապահովական դժուարութիւնները անտեսելով, մշակութային բեղուն օրացոյց մը իրողութիւնը ապացոյց է, որ մեր երիտասարդական, ուսանողական, սկաւառական եւ յատկապէս մշակութային միաւորները հաստատակամօրէն իրենց ազգային առաքելութեան կառչած կը մնան աւելի վճռական քան երբեք:

վրայ կ'արտացոլար ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Մշակութային Միութեան խորհրդապատկերը: Հայրենի բնութեան ու պատմական կոթողներու լուսանկարներուն տակ պարախումբին պարման-պարմանուհիները խորիտ քայլերով գրաւեցին բեմը, աչքս աչքս՝ ինչպէս մեր ազատամարտիկները ազատագրեցին Արցախը, մեզի ներկայացնելու Արցախ պահպանող զաւակներու, նազանք, հեզանքներու քայլափոխներ, ներդաշնակ ու բծախնդիր զգեստաւոր



«Արտախատ» խմբապարը



«Արցախ» խմբապարը

Անցնող շաբաթավերջին, էշրեֆիէի «Մոնօ» թատերաստի մէջ Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Արեգ» պարախումբը հայկական ժողովրդական պարերու նոր եւ ճորտ յայտագիրով հմայեց լիբանանահայութիւնը: Յաջորդական երեք երեկոներ՝ Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ 6, 7 եւ 8 Ապրիլին, Կիրակի յետմիջօրէին՝ ցերեկոյթով մը, Նոր Սերունդ Մշակութային Միութեան վերանորոգեց անցնող երեսունամեակին լիբանանեան պարաբանութիւնը: Տողերը կը գրենք ոչ անպայման ելոյթ մը նկարագրելու պարտականութեամբ: Իրազեկ ենք տարիներու վրայ երկարող Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան պարախումբի միաւորը պահպանելու յամառ ու տքնաշան աշխատանքին: Բեղուն մեղուներու նման տիւն ու գիշեր անոնք պարուստաց Ասատուր Կարապետեանի հետ համագործակցաբար ոչինչ խնայեցին պարախումբի միաւորին կազմաթորման եւ ելոյթներու յաջողութեան համար: Յարատեւ եւ բծախնդիր աշխատանք. ահա մեր սպաւորութիւնը: Ելոյթները կը վայելեն խորհրդարանական հարցերու պետական նախարար Միշէլ Ֆարառնի բարձր հովանաւորութիւնը:

րում, ծափահարութիւն...: «Արցախ» պարին յաջորդեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան խօսքը, զոր փոխանցեց ատենապետուհի Անի Եփրեմեան՝ արաբերէնով: Ատենապետուհին ողջունեց ներկաները, պարախումբին ելոյթներուն յաջողութեան սատարող բոլոր անհատներն ու կազմակերպութիւնները ու շնորհակց հայ-արաբական մշակութային կամուրջներու ամուր հիմքերը, իբրեւ մշակութային միաւոր լիբանանեան պարաբանութիւնը: Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբի միաւորին ներդրումը Լիբանանի մշակութային կեանքին մէջ, Պէյթէտին եւ Ճիպթէյի փառատօներու մասնակցութեամբ իր գտած փայլուն արձագանգով: Տիկին Եփրեմեան շնորհակց թէ միութեան գլխաւոր նպատակն է հայապահպանումը: Հայ պատանիին սորվեցնել հայկական պարը, հայկական մշակութային, անոնց մէջ վառ պահել հայու ոգին որպէսզի պատանիները կոփուին հայկական անկողնի մէջ: Եւ մերժեն օտարամուտ երեւոյթները:

Բեմը դարձեալ կը յանձնուի պարախումբին, այս անգամ փոքր տղոց եւ աղջիկներուն: Մատուցած իւրաքանչիւր պար իր նախորդէն գատորոշուած էր կենսութեան հոգեվիճակ արտայայտող իւրովի պարագրեմներով: Փոքրերը մեր սրտերը շերտացուցին Լիբանանի խաղաղութեան նուիրուած պարով մը: Ներկաները չսպասեցին պարի աւարտին, անոնց խաչատանք արտայայտուեցաւ ընդմիջուած ծափահարութիւններով: Ծափահարութիւնները ուղեկցեցան պարի ամբողջ տեւողութեան: Այս պարին յատկանշականը մեր փոքրիկներուն մօտ իրենց լաւագոյն ներկայացնելու ճիգն էր: Հանդիսականները անմիջապէս կռահեցին եւ իսկոյն գնահատեցին զայն: Բայց եթէ գնահատութեան մասին է խօսքը, ինչ ըսել քնքրութիւն բուրոյ մեր թրթռուն, թովիչ աղջիկներուն «Իլիկներ» պարին: Երաժշ-

տական ձեւաւորումը, քայլափոխներու ներդաշնակութիւնը եւ պարմանուհիներու նազելաձեւ շարժումները ակամայ ծափահարութիւններ խլեցին:

Փոքրիկները՝ տղաք եւ աղջիկներ, իրենց սրամիտ խաղերով մեկնաբանեցին «Գնչուներու» կատակ պարը: Կարինէ Եփրեմեանի կատարողութեամբ «Սպիտակ Աղանի» մենապարը կարծէք դրախտային պարտէզի մէջ ըլլար: Խաղաղութեան ծարաւէն տոչորած սաւառնաթեւ անմեղն էր ազատութեան մէջ շրջող անոր աղանին, իր ճկուն եւ սիրազեղ քայլափոխերով:

Եթէ փոքրերը գնչուներու պարով իրենց հնարամտութիւնները ապացուցեցին, երէց տղաքը առնական շարժումներով «Խաղ Պար»-ին ընդմէջէն ինքնապատասխան զրահաւորեցին իրենց անմեղունակ խորամանկութիւնը:

Խնդումներէս Կարինէ Եփրեմեան, Դալար Եագուպեան եւ Մակի Գալայեան «Անուրջներ»-ու աշխարհին մէջ շրջելով խոստովանեցան իրենց պատանեկան յոյզերը:

Խմբային արաբական պարը թնդացուց սրահը՝ ծափահարութիւններու որոտին տակ: Պարուստաց Ասատուր Կարապետեան այս պարը ընտրած էր անպայմանօրէն շնորհակց հայ-լիբանանեան դարաւոր բարեկամութիւնը, Լիբանանի գոյապայքարին ու վերականգնումին մեր զօրակցութիւնը եւ մասնակցութիւնը:

Երիտասարդութեան առաջին զարուհը նոր թեւակոխած, վառ յոյսերով տոգորուած եւ կեանքի մարտահրաշխները ժպտով դիմաւորելու իր ներամիտութիւնն էր որ կ'արտայայտէր Դալար Եագուպեանի «Գարնանային Պար»-ին ընդմէջէն:

Անի Եփրեմեանի հայ բանաստեղծութեան գանձարանէն հոգեշունչ տողերու համադրութեան մը ասմունքին հետեւեցաւ մեր աւանդապաշտ իրական սեռին ներքողը՝ «Աղօթքի Պար»-ը: Հովուական ներշնչումով ազդեցուած այս պարը խորք ու իմաստ ունեցող պատգամ մը կը փոխանցէր հանդիսատեսին:

Մարտական ոգիով խիզախող հայ երիտասարդին ներուժն ու կորովը ցոյցանող սլացքն էր հայկական Քոչարին: Յարափոփոյ պատկերներով եւ ճորտ շարակարգութեամբ թնդացնող այս պարը արժանացաւ ներկաներուն բուռն ծափահարութեան: Նոյնքան հմայիչ էր աղջիկներու «Ազգագրական

Պար»-ը՝ պատշաճ երաժշտութեամբ եւ միշտ հայրենի հարուստ բնութեան տեսարաններու տակ, որ յայտագրին ամենէն փայլուն մէկ դրուագն էր: Բայց անկասկած ամենէն տպաւորիչը եզրափակիչ «Արտախատ» խմբապարն էր, պարախումբի յիսուն անդամներուն մասնակցութեամբ: Մշակուած երաժշտութեամբ եւ իրերաջաջորդ պարային պատկերներով՝ փոքրերու եւ երէցներու մասնակցութեամբ, միութեան պարախումբը կ'արտայայտէր դժուարութիւնները յաղթահարելու հաւատքը՝ յանուն հայ մշակոյթի պահպանման ու ամրապնդումին:

Խնդումներէս Եագուպեան, «Արտախատ» փակման պարը կրկնուեցաւ: Բեմ բարձրացաւ խորհրդարանական հարցերու նախարար Միշէլ Ֆարառնի ներկայացուցիչ Սեպուհ Միսեան: Ան յանուն նախարարին Ս. Յարութեան տօնին առիթով շնորհակց հայ համայնքը եւ ըսաւ, թէ լիբանանահայութիւնը մէկ կարեւոր օղակն էր Լիբանանին, որ միշտ ալ իր մշակութային ձեռնարկներով բարոյական զօրակցութիւն յայտնած էր Լիբանանի վերելքին: Այս առիթով Սեպուհ Միսեան նշեց, թէ Լիբանանի ծանր օրեր կը դիմազրաւէր, սակայն՝ դիտել տուաւ ան, մենք չենք կրնար մոռնալ Լիբանանը, կը զօրակցինք անոր գերիշխանութեան, անկախութեան պահպանման եւ վերականգնումի մարտահրաշխներին: Ան շնորհակց Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբին յաջող ելոյթը՝ փոխանցելով ապագային եւս Նոր Սերունդի պարախումբին իր ներդրումը շարունակելու նախարար Միշէլ Ֆարառնի պատրաստակամութիւնը: Հանդիսականները բուռն ծափահարութիւններով ողջունեցին վաստակաւոր պարուստաց Ասատուր Կարապետեանը՝ իր հետեւողական եւ համբերատար աշխատանքին համար: Եւ յուրախութիւն բոլորին, պարախումբը Արարատի փէշերուն խորհրդապատկերին տակ մեզի անակնկալ մը մատուցեց ծրագրէն դուրս երկու խմբային պար եւս կատարելով: Խղճամիտ, անուշ աշխատանք եւ անսահման նուիրում. ահա մէկ քանի տողերու մէջ մեր Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչական ընկերակցութեան աշխատանքին արգասիքը:

Ապրիլի շնորհերուն դակնաններ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով
G.Y.O.1060 N.ALLEN AVE.PASADENA,CA 91104

ԿԱՐԵԼԻ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅ Կ'ԸՍԵՔ, ՕՐԻՆԱԲՈՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆՎՆԵԼ ԱՐԴԱՐ ՈՒ ԹԱՓԱՆՑԻԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՎ ՄԱՅԻՍ 12-ԻՆ

Շարունակում է 1-ին

ուի, գարգացման ընթացքի մեջ Հայաստանեցիները:

Յուսադրուեցանք Եւրոպական Բաղաձայնի շրջանակներում (ԵԱՀԿ ԵՎ ԺՀՄԻԳ), ընթացիկ տարուան Փետրուար ամսուան մեջ կատարած յայտարարութիւններէն: Հայաստանի նախագահութիւնն ու Արտգործ նախարարութիւնը իրենց սովորական յանձնարարութիւններէն բացառելով, ԵԱՀԿ-ի եւ այլոց յայտարարութիւնները: Երեսակայեցիներ, թէ կրնար եւ պատահիլ, որ հրաշքի համագործակցութիւններ մը կրնային ապրած ըլլալ վերէն վար հայրենի իշխանաւորները: Ենթադրեցիմք պահ մը, մեր պետութեան իշխանաւորները սկսած են մեր ազգային ընդհանրական շահերը գերադասել իրենց անձնական շիւ ու գնում հաշիւներէն, ի խնդիր հայրենիքի բարգաւաճումին:

Բայց, - այս անգամ, շրջելով ծանօթ ժողովրդական ասացումներէն շարադասական կարգը ըսենք - «շուկայի հաշիւը չի բռնեց տան հաշիւին»:

Այս անգամ ալ, ուրեմն, մեր երկրի «հոտառու» այլ «ընտրական խաղերու վարժ» իշխանաւորները նաեւ միջազգային դիւանագիտութիւնը խաղի բերելու սահմանին կը գտնուին:

Ծանօթ իրողութիւն է այսօր, որ միջազգային դիտորդներ օրը-օրին կ'արձանագրեն Հայաստանի երեսփոխանական ընտրութիւններու նախօրեակներուն իշխանութիւններու կիրարկած խախտումները:

Թուելու համար կարգ մը պարագաներ միայն նշենք, թէ արդէն իսկ ընթացքի մեջ են ընտրական օրէնքներու խախտումները: Տեղի կ'ունենան կաշառքներու ծաւալուն յատկացումներ: Կ'օգտագործուին պետական ու ուսումնական հաստատութիւններ: Հեռուստատեսիլի կայանները բացառաբար կը գործեն ի նպաստ իշխանամետ ընտրական ցանկերու օգտին: Ընդդիմութիւնը կը գրկուի հեռուստատեսիլային հնարարութիւններէ: Նիւթական յատկացումներ կ'ըլլան փոխան անձնագրերու հաւաքագրումին: Անցեալը, արդարեւ, ցաւալիօրէն կը կրկնէ ինքզինք:

Հայաստանեան եւ տեղական մամուլը մանրամասն կ'արձագանգէ այդ մասին: Տխուր իրողութիւն է, որ իշխանութիւնները կրկին անգամ կը կիրարկեն բոլորիս ծանօթ իրենց ընտրական ապօրինի վարժութիւնները, կը շարունակեն այն ամօթալի գործելակերպը, որ առաւելագոյն կը նսեմացնէ հայրենի վարկը:

Բայց այդ բոլորին մէջ ուշագրաւ է հայրենի վարիչներուն մտաւարկական այն հնարամիտ նոր տնօրինումը, որ որոշում որպէս կու գայ արգիլելու արտերկրի մէջ ապրող Հայաստանի Բաղաձայններուն ընտրելու արդար իրաւունքը՝ իրենց գտնուած երկրի մէջ գործող Հայաստանի Հիւպատոսարաններէ կամ Հայաստանի Հանրապետութեան այլ ներկայացուցչութիւններէ ներս, ինչպէս ընդունուած կարգ է տիեզերականօրէն:

Յո՛ւ երթաք Հայաստանի իշ-

խանաւորներ... Գուէներու առաւելագոյն հաւաքագրումը նպատակ չէ: Ան ազգային ձգտումներու կենսագործման միջոց է, որուն համար մէն մի հայու մասնակցութիւնը երաշխիք է այդ գործընթացի յաջողութեան:

Մեր կոչն է մեր ազատատենչ, արդարադատ եւ հայրենամուտ ժողովուրդին վերադառնալ իր արմատներուն: Տէր կանգնիլ իր ազգային երազներուն, գործել անոնց նուիրագործման ուղղութեամբ: Ամէն քանէ վեր դասել հայրենիքը: Նուիրում: Այս ըլլայ բոլոր մեր նշանաբանը՝ երբ «Մայիսի 12-ին պիտի կանգնինք ընտրական

բուէտութիւնը առջեւ: Հայաստան պէտք ունի մէն մի հայու թիկունքին, բարոյական ու նիւթական օժանդակութեան, հոգատարութեան, յատկապէս ազգատարու հայրենասէր ժողովրդավար առաջնորդներու, որոնց ծարաւն ունինք երկար ժամանակէ ասդին:

Մի՛ վհատիր, պիտի յաղթես դուն, իմ արդարասէր, ազատատենչ, ու անվհատ ժողովուրդ:

Դուն ցոյց պիտի տաս, որ կարելի է վերահաստատել օրինաւորութիւնը երկրէդ ներս, հաւատաւոր, միասնական ու նպատակասլաց ընտրութիւն մը կատարելով, ՄԱՅԻՍ 12-ԻՆ, հոգ չէ թէ առանձինդ այս անգամ:

Palm Springs

**PALM SPRINGS ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125





Wahib's

MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT

INTERNATIONAL ~ ARABIC

CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

**910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641**

ԸՆԴԿԱՑ ՈՎԿԻԱՆՈՍԻ ԸԱՅ ԸԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շարունակում էք 13-Էն

րոնի յայտնություն: Հնդկահայ թատրոնը, այս գծով, իր նիւթը կ'առնէ ժամանակակից կեանքին, իրապաշտ ձեւով մը որ գաւեշտի միջոցով կը փորձէ բարոյական նպատակներ հետապնդել: Գառուի վերլուծեց յատկապէս հրապարակագիր եւ թատերագիր Մկրտիչ Մարտիրոսեանի գործերը, ներառեալ անոր տեսական գրութիւնները թատրոնի գեղագիտական եւ ընկերային պաշտօնին մասին, մատնանշելով որ հնդկահայ թատրոնի հիմնական բնորոշը անգլիական ժամանակակից կատակերգութիւնն էր, ի տարբերութիւն յետոյ յառաջանալիք արեւելահայ եւ արեւմտահայ թատրոններուն, որոնք պիտի ներշնչուէին գլխաւորաբար՝ մէկը գերման եւ ռուս, իսկ միւսը ֆրանսական եւ իտալական ազդեցութիւններէ:

Օշին Քէշիշեան (Կլէնտէյլ Գոլէճ) ներկայացուց ժԼ դարու վերջերէն մինչեւ ի դարու կէսերը տարածուող հնդկահայ մամուլի աւելի քան տասնեակ մը անունները, ներառեալ Մատրասի մէջ 1794ին հրատարակուած հայ առաջին թերթը՝ «Ազդարար»ը: Հայ պարբերականներու մեծամասնութիւնը հրատարակուած են Կալկաթայի մէջ, թէեւ եղած է նաեւ Ռանկուն (Միանմար-Նախկին Պուրմա) հրատարակուած թերթ մը: Քէշիշեան անդրադարձաւ յիշեալ հրատարակութիւններու ընդհանրապէս ռուսամէտ քաղաքական կողմնորոշման, ինչպէս նաեւ անոնց առեւտրական դերին:

Նիստի վերջին գեկուցաբերն էր Հարվըրտ համալսարանէն Մանա Քիւա, որուն նիւթն էր «Յովսէփ էմին եւ բրիտանական գաղութարարական քաղաքականութիւնը Կալկաթայի մէջ»: Քիւա քննարկեց 1792ին Լոնտոն հրատարակուած The Life and Adventures of Joseph Emin գրքին մէջ էմինի գործածած մշակութային տարբերութեան եւ առնչումի լեզուն, որուն ընդմէջէն հեղինակի ինքնութեան եւ ազգի պատկերացումները կ'որոշուէին: էմին հատորին մէջ կը ներկայացնէ անգլիացիներու հետ իր շփումները նախ Կալկաթայի, եւ ապա Անգլիոյ մէջ, որոնցմէ եւ կու գայ իր հայրենասիրական ձգտումներու ներշնչումը: Սակայն երբ իր յուշերը գրի կ'առնէ ժԼ դարու 80ականներու վերջերուն, բրիտանական գաղութային քաղաքականութիւնն ու դիրքորոշումը մեծ փոփոխութիւններ կրած են, հետեւաբար թերեւս ձեւափոխելով բրիտանացիներու հետ կարելի առնչումի իր ընկալումը, որ հիմնուած էր բարոյական առնականութեան մը հասարակաց ըմբռնումին վրայ: Թէեւ լեցուն են բարոյապէս գերակայ Արեւմուտքի մը եւ այլասերած Արեւելքի մը մասին եւրոպական արեւելագիտութեան յատուկ կանխընկալ պատկերներով, այնուհանդերձ էմինի յուշերը վերջին հաշուով բարոյական իտէպլներու շատ աւելի բարդ պատկերացում մը կու տան, դրսեւորելով միաժամանակ թէ բրիտանական եւ թէ պարսկատիրապ գրականութեան փոխաբերութիւններ: Քիւա վերլուծեց մէկ կողմէ էմինի արժանաւորած բրիտանական մշակոյթին, իսկ միւս կողմէ Պենկալի մէջ գաղութային իշխանութեան հզօրացումին առթած փոփոխութիւններուն միջեւ յառաջացած լարումը, բացատրելով թէ միաժամանակ Արեւելքի եւ Արեւմուտքի հանդէպ թէ առնչումի եւ թէ տարբերութեան իր պնդումներով, էմին ինքզինք կը գետնի սնվեա-

դարձօրէն արեւելեան միջոցի մը մէջ, առանց սակայն հրաժարելու եւրոպական ազգային արժանիքները իրագործելու կարողականութենէն: Ի տարբերութիւն ինքնասպասարկու եւ անօդական առեւտրականին, էմին ինքզինք կը պատմէ որպէս հայ գորութեանակնութեան իրագործումի տիպար, հայ ազգայնութեան հասունացումին համար անհրաժեշտ եղող բարեպաշտ եւ միաժամանակ խիզախ առնականութիւն մը նկարագրելով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԵՒՅՈՅՆԵՐՈՒ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հայ-հնդկական յարաբերութիւններու եւ պատմութեան նուիրուած երկրորդ նիստի վարիչն էր Լոնկ Պիշի համալսարանի դասախօս Հուրի Պէրպէրեան: Առաջին աւթիւ խօսեցաւ Օպլըրի Գոլէճէն Մայքըլ Ֆիշըր, որ անդրադարձաւ ժէ դարուն Հնդկաստանի մէջ հայ համայնքին ու առանձնապէս կիներու եւ այրերու յատուկ դերակատարութեան: Նշելէ ետք թէ հայեր աշխարհի չորս ծագերուն իրենց համար ընդհանրապէս մասնատու կայք մը ստեղծած են, շեշտեց թէ անոնք Հնդկաստան հասած էին նախ քան փորթուկալցիները (1497), Մուղալները (1526), եւ անգլիական, ֆրանսական եւ այլ եւրոպական արեւելահնդկական ընկերութիւններ (ժէ դարու սկիզբէն): Այսպէս, անոնք արդէն կը ճանչնային տեղական բնակչութիւնը եւ այնպիսի կապեր հաստատած էին տեղույն վրայ, որ յետագայ եկողները բնականաբար պիտի ուզէին օգտուիլ անոնց կարելութիւններէն: Այս շրջարկին մէջ է որ ան ներկայացուց արիւսային իր հետազոտութեանց արդիւնքներուն վերլուծումը առանձնապէս երկու հայերու մասին, որոնք իրենց միջնակայ դիրքին ու ինքնութեան բերումով միջնորդային դեր կատարած էին եւրոպական, մուղալ եւ հնդիկ ժողովուրդներուն եւ քաղաքական կառույցներուն միջեւ: Մարիամ, որ մուղալ կայսերական ընտանիքի պաշտպանեալն է, երկու անգլիացիներու հետ կ'ամուսնանայ յաջորդաբար Հնդկաստանի եւ Լոնտոնի մէջ: Անոր պատմութեան կ'անդրադառնայ ականաւոր թատերագիր ծոն Տրայտըն (1631-1700) իր գործերէն մէկուն մէջ: Իր կարգին Հոնմ, Ֆիրենցէ եւ Փարիզ ապրած կաթոլիկի է հայ մըն է Մարգարա Աւանջիւնց, որ Ֆրանսական Արեւելահնդկական Ընկերութիւնը կը ներմուծէ հարաւային Հնդկաստան, ի վերջոյ փոխարինուելու համար ֆրանսացի գործակատարներով: Երկու պարագաներուն ալ, ժէ դարուն հայերու միջնակայ եւ պետականութենէ գուրկ դիրքը միաժամանակ թէ՛ պատհանութիւններ կ'առթէ, եւ թէ՛ դժուարութիւններ կը պատճառէ անոնց բնակցային գործընթացներուն:

Լէյտընի համալսարանէն Պհասուաթի Պհաթթարեան գեկուցեց հայազգի Խոնա Կրէկորի (Գորգին իան) մասին, որ առեւտրական գործունէութիւնը լքելով դարձած էր Պենկալի նաւապ կառավարիչ Միր Քասիմի (1760-1764) բանակին հրամանատարը, կարեւոր դերակատարութիւն ունենալով գինեալ ու ժերու վերակազմակերպման եւ անգլիացիներու դէմ կռիւներու ընթացքին, ի վերջոյ իր կարգին սպաննուելով, ըստ աւանդութեան՝ իւրայիններու կողմէ, իսկ գեկուցաբերի առաջադրած դրոյթին համաձայն՝ անգլիացիներու մէկ դաւադրութեամբ: Հիւրընկալ համալսարանէն

փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան նախ անդրադարձաւ Երբոհամայի մէջ Հայաստանի Ա. հանրապետութեան պատուոյ հիւպատոսուհի Տիանա Աղաբեկ Աբգարի կեանքին եւ գործին, որմէ ետք խօսեցաւ Կալկաթա համաս մանկութենէ մը ընձիւղած մեծահարուստ Խաչիկ Պողոս Աստուածատուրեանի (Սըր Գաչիկ Փոլ Չաթըր՝ 1846-1926) մասին, որ մեծ դերակատարութիւն պիտի ունենար Հոնկ Քոնկի տնտեսական վերելքին մէջ: Յովհաննիսեան ապա ներկայացուց 2005ին Հոնկ Քոնկի մէջ Չաթըրի յիշատակին պատրաստուած ժապաւէն մը, որ ընդհանուր պատկեր մը տուաւ մեծանուն բարերարին կեանքին եւ տնտեսական ու բարեփոխական գործունէութիւններուն շուրջ: Հարվըրտէն Գրիգոր Աֆտանդիլեան իր կարգին խօսեցաւ Բ. Աշխարհամարտի ընթացքին ամերիկահայ զինուորներու եւ հնդկահայ համայնքի անդամներու միջեւ եզակի ու շատ անգամ պատահական հանդիպումներուն եւ անոնց անդրադարձներուն մասին, յատկապէս ինքնութեան եւ ամերիկեան ու հայկական գոյգ պատկանելիութիւններու տեսակարար կշիռին վրայ ատոր ունեցած ազդեցութեան վրայ: Յաջորդ գեկուցողը՝ Հայաստանի արտաքին փոխ-նախարար Արմէն Բայբուրդեան նկարագրեց հնդկահայ ներկայ համայնքի կացութիւնը, որ հակառակ փոքրաթիւ ըլլալուն, կը փորձէ աւելի կազմակերպ աշխատանք տանիլ իր մշակութային արժէքները պահպանելու համար: Բայբուրդեան յայտնեց թէ տեղական համայնքի անդամները, որոնք աւանդաբար զգուշաւոր եղած են «դրսեցի» հայերու հանդէպ, սկսած են հետզհետէ համարել զանոնք իրենց ընկերային կեանքին: Ներկաներու կողմէ բազմիցս կատարուած հարցումներուն պատասխանելով, Բայբուրդեան յայտնեց թէ Կալկաթայի Մարի Կասիրական ձեմարանի «առասպելական» հարստութիւնը սահմանափակուած է գրեթէ ամբողջովին HSBC դրամատնային հաստատութեան մէջ Սըր Չաթըրի կողմէ կտակուած բաժնեթուղթերու՝ մօտ քսան միլիոն տոլարի համարժէք գումարի մը, որուն տոկոսներով է որ ներկայիս ձեմարանը ուսում կը ջամբէ գլխաւորաբար հայաստանահայ ութսունի չափ պատանիներու: Միւս կողմէ, ան մատնանշեց հետաքրքրական այն իրողութիւնը, որ Հնդկաստանի մէջ կան հաւանաբար աւելի հայախօս հնդիկներ քան հայեր. այսպէս, վերջին տարիներուն Հայաստանի համալսարաններէն վկայուած ու հետեւաբար հայերէն սորված հնդիկ նախկին ուսանողներու թիւը կը հասնի երկու հազարի, որոնցմէ մէկ քանին Նոր Տեյչիի մէջ նոյնիսկ հիմնած են հայախօսութեան ակումբ մը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՑԱՆՑ ՄԸ

Երկրորդ օրուան նիստի ընդհանուր նիւթն էր «Հեռահաս առեւտրականներ եւ Հնդկաց ովկիանոսի ջուղայական առեւտուրը»: Զեկուցումները համարեց UCLA-ի Պատմութեան բաժանմունքի ատենապետ Էտուրը Ալիբըս: Առաջին ներկայացնողն էր նոյն համալսարանի Հնդկաստանի եւ Հարաւային Ասիոյ Կեդրոնի տնօրէն Սանճայ Սուպրահմաննամ, որ կեդրոնացաւ ժէ դարուն Ֆրանսական Արեւելահնդկական Ընկերութեան եւ երկրի յատկապէս արեւմտեան ափի նաւահանգիստներու մէջ գործող հայ առեւտրականներու յարաբերութիւններուն վրայ, որոնք սկզբնական բարեկամական եւ իրերօգնութեան մակարդակէն հետզհետէ մտած

էին մրցակցական եւ փոխադարձ անվստահութեան հոլովոյթի մը մէջ: Երկրորդ խօսողն՝ UC-Irvine-էն Սեպուհ Ասլանեանի ուսումնասիրութիւնը կ'օգտուէր ընկերաբանութենէն եւ տնտեսական ընկերաբանութենէն եկող «ընկերային դրամագլուխ»ի տեսութենէն, քննելու համար աշխարհատարած ջուղայեցիներու առեւտրական գործառնութիւններուն մէջ «վստահութեան ցանցերու» առկայութիւնը: Այս ցանցերը անոնց միջեւ վարկային եւ այլ կարգի ելեւմտական յարաբերութիւնները պիտի կարգաւորէին ոչ միայն անպաշտօն սովորոյթներու, այլեւ կիսապաշտօնական կանոններու եւ հաստատութիւններու միջոցով: Այսպէս, Եւրոպայէն Մայրագոյն Արեւելք ու Խաղաղականի կղզիներն ու հաւանաբար մինչեւ ամերիկեան ցամաքամասն անգամ հեռաձգուող առեւտրականներու ցանցերը յատուկ նշանակութիւն կու տային պատիւի եւ բարեհամբաւութեան դերին, եւ պարկեշտ գործառնութիւններ ու պայմանագրերու գործադրութիւնը ապահովելու համար ունէին միջոցառումներու յաջորդական շարք մը, որ կ'աւարտէր Նոր Ջուղայի առեւտրականներու իրաւարար ժողովին որոշումներով: Գիտաժողովի վերջին խօսողն էր Ելէյ Համալսարանէն տոբթորական թեկնածու Թաթիանա Մէյխաս, որ փաստեր բերաւ ժԼ դարու սկիզբը ջուղայեցի առեւտրականներու ամերիկեան ցամաքամասի վրայ ներկայութեան: Մէյխաս մանրամասն ուսումնասիրութեան եւ վերլուծումի ենթարկած է Մեքսիքօ քաղաքի Հաւատաքնական Առեւտրարձանագրութիւնները, որոնք լոյս կը սփռեն ջուղայեցի տոն ֆետրօ տի Չարաթէ Քիխանօ անուն առեւտրականի մը կեանքին եւ մինչ այդ անոր ունեցած առեւտրական գործունէութեան եւ անձնական կապերուն վրայ: Չարաթէ ստիպուած էր երկիցս ներկայանալ հաւատաքնական ատենանին առջեւ, ինքզինք արդարացելու համար հերձուածողութեան ամբաստանութիւններէ, որոնք կու գային գոյգ մը իրենց կարգին հայ՝ կաթողիկէ ֆրանսիսկեան միաբաններէ. ասոնք այդ ատեն տիրող սովորութեան համեմատ եկած էին ժամանակի հարստութեանց աղբիւր ամերիկեան ցամաքամասը, իրենց համայնքին համար հանգանակութիւն կատարելու նպատակով: Իր փայլուն գեկուցման մէջ Մէյխաս ներկաներու ուղարկութիւնը հրաւիրեց ոչ միայն տուեալ անձի 1723-1731 Մեքսիքոյէն Աքաիուլքօ եւ անդին՝ Փիլիպեան կղզիներու հետ կատարած գործառնութիւններուն վրայ, այլեւ ուղարկու օրինակ մը բերաւ պատմական փաստաթուղթի մը վերլուծման բազմակողմանի կարելիութիւններէն, որոնք կը վկայեն, ի միջի այլոց, քաղաքի մէջ առկայ փոքր համայնքի մը մասին, հազուադիւր օրինակ մը կ'ընձեռեն հեռաւոր ժամանակաշրջանի մը մէջ ապրած անձերու խօսելաձեւի եւ մտածելակերպի բառացի արձանագրութեան ու առեւտրականի մը մտերիմ կենսագրական տուեալներու վերականգնումին, ինչպէս նաեւ լուսարձակի տակ կ'առնեն հայկական կանուխ սփիւռքի տնտեսական գործունէութեան եւ ընկերային փորձառութիւններու բացառիկ օրինակ մը: Գիտաժողովը անգամ մը եւս փաստ հանդիսացաւ այն իրողութեան, որ հարկաւոր է հայոց պատմութեան եւ հայ գաղութներու ուսումնասիրութեան արդիւնքները հունաւորել միջազգային վարկի տէր հաստատութիւններու եւ գիտական հաւաքականութեան կողմէ ընդունուած սովորոյթներու ընդմէջէն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՃԱԽՄԱՏ

ԼԵՒՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՅԱՂԹԵՅ ՎԼԱԴԻՄԻՐ ԿՐԱՄՆԿԻԿԻՆ

Շախմատի աշխարհի գալաթակիրը եւ օլիմպիական ախոյեան Լեւոն Արոնեանը Կիրակի օրը պաշտօնապես յաղթող ճանաչուեց աշխարհի ախոյեան Վլադիմիր Կրամնիկի հետ երեւանեան մրցամարտում: Մրցամարտի գլխաւոր մրցավար Աշոտ Վարդապետեանը ազդարարեց Արոնեանի յաղթանակը՝ 4:2 հաշուով:



Վերջին երկու տարիներին Հայաստանի լաւագոյն մարզիկն իր առաջին յաղթանակները տօնեց Կրամնիկի նկատմամբ: Մինչ երեւանեան մրցախաղը նրանք վեց անգամ էին հանդիպել՝ երկու յաղթանակ ունէր Կրամնիկը, եւս չորս հանդիպում աւարտուել էր ոչ-ոքի:

Վլադիմիր Կրամնիկ եւ Լեւոն Արոնեան Տիգրան Պետրոսեանի կիսանդրին առջեւ

Վլադիմիր Կրամնիկը խոստովանեց, որ իր պրոֆեսիոնալ կարիերայի ընթացքում դեռ երեք անընդմէջ պարտութիւն չէր կրել: Արոնեանից կրած պարտութիւնները նա կապեց, առաջին հերթին, յոգնածութեան հետ:

Մրցախաղի փակման խօսքում Հայաստանի վարչապետ, շախմատի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսեանը ասաց, որ այս յաղթանակով հայկական շախմատի պատմութեան նոր էջ է սկսուում:

«Մենք ականատես եղանք երկու շախմատային հսկաների մենամարտին: Աշխարհի բոլոր անկիւններում դիտում էին այս խաղը, եւ վստահ եմ, որ Հայաստանի շախմատի պատմութեան մէջ, միզուցէ նաեւ՝ համաշխարհային շախմատի պատմութեան մէջ գրուեց նոր էջ», - յայտարարեց Սերժ Սարգսեանը:

Լեւոն Արոնեանը Մայիսի 25-ից էլիստաշում մասնակցելու է աշխարհի չեմպիոնի կոչման հաւակնորդների մրցումներին, որոնցում յաջողութեան հասնելու դէպքում իրաւունք կը ստանայ Սեպտեմբերին Մեխիկոյում վիճարկելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

ՍԱՍԲՕ

ԱՃՈՏ ԴԱՆԻԷԼԵԱՆԸ ԵՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆ

Պուլկարիայի Պրավիցա քաղաքում աւարտուած սամբոյի Եւրոպայի առաջնութիւնում մեր սամբիստներից առաւել յաջողը ստեփանակերտցի Աշոտ Դանիէլեանի ելոյթն էր: Մինչեւ 74 կգ քաշային կարգում Աշոտը հասաւ եզրափակիչ, որտեղ զիջելով մրցակցին՝ արժանացավ Եւրոպայի փոխչեմպիոնի տիտղոսին: Միջին քաշում պրոնդէ մրցանակակիր դարձաւ իմիլ Ասլանեանը:

ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

ՄԱՆՁԵՍՔԸ ԵՐՈՒՆԱՅԹԸՏ ԱՌՈՅԵԱՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան աւարտին 2 մրցում մնացած Մանչեսթըր Եունայթեդ Նուաճեց Անգլիոյ բարձրագոյն դասակարգի ախոյեանի տիտղոսը, արդարեւ շաբաթավերջին Մանչեսթըր Եունայթեդ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մանչեսթըր Սիթին մինչ անցեալ տարուայ ախոյեան Չելսի միայն հաւասար արդիւնք մը արցանազրեց Արսենալի դեմ 1-1 արդիւնքով: Այս արդիւնքներէն ետք վաստակած միւսերորդ տարբերութիւնը երկու խումբերուն միջեւ եղաւ 7 միւսեր (88-ի դեմ 81):

37-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ռիսինգ - Ուաթֆորտ	0-2
Ուէսթ Յամ - Պոլթըն	3-1
Էվըրթըն - Փորթսմութ	3-0
Ուիկան Աթլ. - Միտլդըրֆորտ	0-1
Ֆուլհամ - Լիվըրփուլ	1-0
Նիւքեմըր - Պլեյքըրթ	0-2
Ասթոն Վիլլա - Շեֆիլտ Եուն.	3-0
Արսենալ - Չելսի	1-1
Չարլթըն - Թոթեմհամ	0-2
Մանչեսթըր Սիթի - Մանչեսթըր Եուն.	0-1

Մայիս 9-ին
Չելսի - Մանչեսթըր Եուն.



Առաջատար խումբերու դասաւորումը						
Մանչեսթըր Եունայթեդ	36	28	4	4	83-26	88
Չելսի	36	24	9	3	63-23	81
Լիվըրփուլ	37	20	7	10	55-25	67
Արսենալ	37	19	10	8	63-35	67
Էվըրթըն	37	15	12	10	51-35	57
Պոլթըն	37	16	7	14	45-50	55
Ռիսինգ	37	16	6	15	49-44	54

ՎԱՅԱՍԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ


Հայաստանի ֆութպոլի առաջնութեան 4-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

- Միկա - Բանանց 1-1
- Փյունիկ - Արարատ 0-0
- Ուլիս - Կիլիկիա 2-0
- Գանձասար - Շիրակ 0-0

Խումբերու դասաւորումը						
	Խաղ	Ցաղթ.	Հաւ.	Պարտ.	Կոչ	Միւսեր
1. Փյունիկ	4	3	1	0	8-1	10
2. Գանձասար	4	2	2	0	3-0	8
3. Արարատ	4	2	1	1	6-1	7
4. Միկա	4	2	1	1	6-4	7
5. Բանանց	4	1	2	1	4-3	5
6. Ուլիս	4	1	0	3	2-9	3
7. Շիրակ	4	0	2	2	1-4	2
8. Կիլիկիա	4	0	1	3	1-9	1

ՈՍԿԵՐԻՉԻ ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

Ֆրեզնոյի մէջ, 880sf 35 տար. պիզնէս, լաւ եկամուտ, բանուկ shopping center, բոլոր շարմարութիւնները ներառեալ: Ցակոբ՝ 559-224-7051/559-313-0146:



HARUT DER-TAVITIAN
License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201


Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

You can change your behavior and we will help you to do that



HYPNOSIS CENTER



Artin Sagherian

Hypnotherapy

Tel: 818-434-8118

Call for an appointment or consultation

ՀԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Փորձառու Բժիշկ

ԱՐԹԻՆ ՍԱՂՐԵԱՆ

Վկայեալ Հիպնոսաբոյժ

- * Պատանիներու վերաբերող վարուելակերպային փոփոխութիւն
- * ADD-ADHD
- * Անկողնային գիշերային թրջում (միզային)
- * Եղունգների կրծում

Հասց. 1160 North Central Ave., # 210, Glendale

Հեռ. 818-434-8118

Միայն ժամադրութեամբ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՀԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՍԱԿԱՅՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան

Ժամը 10:00-ից 12:00

Կլէնտէյլի 26-րդ կայանից

ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆ

Սարգիս Թոմոճեան ծնած է Հալէպ, 1955 Սեպտեմբեր 20ին: Երկու երէց քոյրերէն՝ Մարիէն եւ Վարդուհիէն ետք, կրտսեր գաւակն է Տէր եւ Տիկ. Անդրանիկ եւ Էլմաստ Թոմոճեաններու:



Իր նախակրթական ուսումը կը ստանայ Հալէպի Հայ Աւետարանական ֆէթէլ դպրոցին մէջ:

Կեանքի պայմանները կը ստիպեն, որ պատանի տարիքին ան նետուի կեանքի ասպարէզ: Բայց ուսման պապակը Սարգիսի մէջ, կը մղէ զինք կատարելագործելու մեքենագործի արհեստը եւ կը դառնայ վկայեալ մասնագէտ ինքնաշարժի նորոգութեան:

Լեցուն խանդով ու եռանդով, դեռ մանկութեան շրջանին, կը դառնայ «Գայլիկ» Հալէպի գերմանիկ-Վասպուրական Միութեան եւ յետագային որպէս սկաւտ կը վարէ պատասխանատու պաշտօններ:

Միեւնոցն աստեղ իր եռուն մասնակցութիւնը կը բերէ նոյնպէս Վասպուրականի ֆութպոլի խումբին: Որպէս աչքաւոր մարզիկ մաս կազմելով Հալէպի Երիտասարդական ֆութպոլի հաւաքականին, կը մասնակցի 1977ին Պուլկարիոյ եւ այլ երկիրներու Երիտասարդական ֆութպոլի մրցումներուն:

1979ին Սարգիս կու գայ Միացեալ Նահանգներ Փասատինայի մէջ կը միանայ իր ծնողքին եւ քրոջ Վարդուհիին:

Փասատինայի մէջ ընկերովի կը հաստատէ «KNS Mobil Gas Station»ը եւ կը վարէ գայն շուրջ 20 տարի: Ապա կը հիմնէ ինքնաշարժի նորոգութեան իր սեփական հաստատութիւնը:

Հոգեկան մեծ բաւարարութեամբ Սարգիս Փասատինայի մէջ կը գտնէ իր երկու հարազատ ընկերները՝ Գայլուտ Տէրտէրեանն ու Կարօ Գրիգորեանը: Գօտեպնդուելով անոնց հետ, մաս կը կազմէ Հ.Մ.Մ.ի Վարչութեան եւ որպէս սկաւտապետ կը ծառայէ սկաւտական շարժումին:

1980ին Սարգիս Թոմոճեան, կատարելով իր գաղափարական ուխտը, կ'անդամակցի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան:

Որպէս «Փարամագ» մասնաճիւղի վարչական, իր մարզական գործունէութեան աւելցումը կը կատարէ նաեւ իր կուսակցական պարտաւորութիւնները:

1984ին կ'ամուսնանայ Ազնիւ Չորպաճեանի հետ: Կը բախտաւորուին երկու գաւակներով՝ Գոհար եւ Էնթրոնի:

Սարգիս Թոմոճեան իր կեանքի ամբողջ տեւողութեան մնաց պատանշի վրայ պարտականութեան գիտակից թէ իր գաղափարին եւ թէ իր ընտանիքին: Նոյն ձեւով ալ գործի վրայ, իր գաւակները դպրոց տարած միջոցին, անակնկալօրէն փակեց իր աչքերը սրտի կաթուածի հետեւանքով:

Հանգուցեալ Սարգիս Թոմոճեան թէ որպէս ամուսին եւ թէ որպէս հայր, մարմնացումն էր սիրոյ, գուրգուրանքի եւ հոգատարութեան: Ան իր բարի գգացումները կը բաշխէր նաեւ իր բոլոր հարազատներուն եւ շրջապատին: Համեստ էր, ծառայատէր եւ հայրենասէր: Առիթ չէր փախցնէր իր օգնութեան ձեռքը երկարելու իր գաղափարի ընկերներուն, իր կուսակցութեան Մ.Դ.Հ.Կ.ին եւ Հայ Մարմնամարզական Միութեան:

Սարգիս Թոմոճեան յաւէտ պիտի ապրի իր հարազատներուն եւ գաղափարի ընկերներուն յիշողութեան մէջ՝ իր բարի ժպիտով, անհուն սիրով եւ ծառայասիրութեամբ:

Հանգիստ իր աճիւններուն:

«ԵԹԵ ԿԵՂԾԻՔՆԵՐ ԼԻՆԵՆ, ԵՍ ԼԻՆԵԼՈՒ ԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ»

Շարունակուած էջ 6-էն

Թուերը, որ մենք ստացել ենք: Կը լինեն մեծ կեղծիքներ՝ Հայաստանում կը լինեն մեծ ցնցումներ. ես դա ասում եմ պարզ, որ իւրաքանչիւրը լսի: Որպէսզի մեր երկրում չլինեն ցնցումներ, լինի նորմալ, ժողովրդավարական վիճակ, բոլորը պէտք է շահագրգռուած լինեն՝ կազմակերպելու իրօք ազատ, թափանցիկ ընտրութիւններ: Այսօր Հանրապետական կուսակցութիւնը, «Բարգաւաճ Հայաստան»-ը, Միաւորուած աշխատանքային կուսակցութիւնը եւ Դաշնակցութիւնը ունեն վարչական, ֆինանսական, էթերային արտօնութիւններ, իրենց բոլոր հնարաւորութիւնները օգտագործում են որպէս իշխանական կառուցներ, հովանաւորում են, որպէսզի կարողանան իրենց ինդիւրները իրենց ուզած ձեւով լուծել: Դրան էլ ենք համաձայն՝ միայն կազմակերպէք արդար ընտրութիւններ քուէարկութեան օրը: «Օրինաց երկիր»-ը տեսաձայնագրելու է ընտրական յանձնաժողովներ շինարարութեան համար, որտեղ հնարաւորութիւն կ'ունենանք, ձայնագրելու ենք ձայների հաշուուման գործընթացը: Թող ազատ, արդար ընտրութիւն լինի. կը յաղթի՞ որեւէ կուսակցութիւն՝ թող յաղթի: Առաջին յաղթողին խոստանում եմ ես շնորհաւորել, էթէ նա ազնիւ, արդար պայքարում կը

յաղթի: Դարց. - Եթէ կեղծիքներ լինեն, «Օրինաց երկիր»-ը փողոց է դուրս գալու:

Ա. Բ. - Եթէ կեղծիքներ լինեն, այո, ես լինելու եմ պայքարի առաջին դիրքերում: Մենք պայքարելու ենք վճռական ու սկզբունքային: Բայց, նորից եմ ասում, ես պատկանում եմ այն մարդկանց թուին, որոնք չեն ուզում, որ մեր երկիրը հերթական անգամ խայտառակ լինի: Ես ասում եմ՝ եկէք կազմակերպենք ազատ, արդար, թափանցիկ ընտրութիւններ: Բայց նաեւ ասում եմ՝ բոլոր այն մարդիկ, ովքեր մտածում են, որ ընտրական յանցագործութիւն են անելու եւ մնալու են անպատիժ, չարաչար սխալում են: Մենք մինչեւ վերջ պայքարելու ենք՝ օրէնքով ընձեռուած բոլոր հնարաւորութիւններով ու միջոցներով: Այսօր գնում են զիւղերը, պարարտանիւթ են բաժանում, ալիւր են բաժանում, ընտրակաշառքներ են խոստանում, ցուցակներ են կազմում Ասում են՝ փաստեր, մամուլում ասում են՝ կոնկրետ փաստեր չկան: Ուրեմն, կան իրաւական ծառայութիւններ, յատուկ ծառայութիւններ, գաղտնալսումներ անելու փոխարէն թող գնան տեսնեն՝ որտեղ ով ինչ ցուցակներ է կազմում:

Աննա Իսրայէլեան, Ռուզան Խաչատրեան եւ Արմէն Դուլեան:

ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՏՕՐԴ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏՊԱՄԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 14-էն

գիրը ներկայացուց Հոգւ. Տ. Պարեո Մ. Վրդ. Երէցեան:

Սրբեան Հօր օրհնութեան աղօթքով փակուեցաւ Արեւմտեան Թեմի 80րդ Թեմական Պատգամաւորական Ժողովը: Պատգամաւորները հոգեկան գոհունակութեամբ մեկնեցան իրենց Մուխերը:

Թեմական Խորհուրդի 2007-2008 թուականի կազմը հետեւեալն է.-

Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան Նախագահ Առաջնորդ Արեւմտեան Թեմի

Բրշ. Պարլօ Սրկ. Տէր Մկրտիչ-

եան Ատենապետ

Իրաւաբան Յովսէփ Կանխմեան

Փոխ Ատենապետ

Պէն Գրիգորեան Գանձապահ

Լիլի Ռիւնկ Պալեան Ատենադպրուհի

ԱՆԴԱՄՆԵՐ

Հոգւ. Տ. Պարեո Մ. Վրդ.

Երէցեան

Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ.

Գասպարեան

Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ.

Արժ. Տ. Եղիա Քհնյ. Հայրապետեան

Դոկտ. Վահրամ Պիրիճիք

Իրաւաբան Ճէֆ Հագարեան

Բրշ. Գարլ Սրկ. Պարտագեան

ՇԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ ՎԱՐՇԱՐԱՆԻ ԱՊՐԻԼ 24-Ի ՈՂԵԿՈՉՈՒՄԸ

Շարունակուած էջ 8-էն

ներս, ուր բոլոր աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին՝ երգելով, արտասանելով Ապրիլեան նահատակներու նուիրուած բանաստեղծութիւններ, երգեր եւ շարականներ: Օրուան հանդիսավարն էր Մարի Թիւթեյեան, որ իր բացման խօսքով անգամ մը եւս ներկայացուց թուրք պետութեան կազմակերպած եւ նախածրագրած ոճիրը եւ կոչ ուղղեց աշակերտներուն, Յ. Թումանեանի բարեփոխուած տողերով՝ «Ապրէ՛ք երեխեք եւ մեզ պէս ապրէք», ապա մանկապարտէզի աշակերտները արտասանեցին «Մեր ուխտը» եւ երգեցին «Հայ երգ» խմբերգը: Հանդիսութիւնը շարունակուեցաւ արտասանութիւններով եւ կենդանի պատկերներով, ինչպէս «Դերենիկ» (Ե. դասարան) եւ «Մառ» (Զ. դասարան): Վերջին մասով բեմ բարձրացան եօթներորդ եւ ութերորդ դասարաններու աշակերտները եւ ներկայացուցին Պարոյր Սեւակի «Անլուսի զանգակատուն»-ը, որուն զուգահեռ Կոմիտասի յորինումները կը նուագէր, դաշնակի վրայ, վարժարանիս երաժշտութեան

ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեան, մինչ սրահը լուսութեամբ կը հարողողէր Կոմիտասի անմահ հոգիով: Ասմունքի աւարտին, աշակերտներ ճերմակ մեխակներ գետեղեցին Կոմիտասի դիմանկարին, ըսելով՝

Եւ մեզանից արդ ընդունիր Երախտիքի այս խաչքո՛ւր...

Հանդիսութեան մենեղեցին վեցերորդ դասարանէն Մէրի Նահարեան, Մարալ Պոյաճեան, Միշէլ Եարայեան եւ եօթներորդ դասարանէն՝ Անճելա Ժամկոչեան:

Ողբկոչումի աւարտին, աշակերտները հոգեկան բաւարարութեամբ եւ գոհունակութեամբ լսեցին վարժարանիս տնօրէնուհի քոյր Լուսիայի եզրափակիչ խօսքը, որ յորդորեց աշակերտներուն հաւատարիմ մնալու իրենց նախնիներու աւանդին:

Աշակերտութիւն, ծնողներ եւ հիւրեր սրահէն բաժնուեցան «Հանգ-չեցէք դուք...» շարականի երգեցողութեամբ, վերանորոգելով իրենց ուխտը, եւ խոստանալով հաւատարիմ մնալ իրենց անցեալին, մեր պահանջատիրութեան եւ արդար դատին, որուն ժառանգորդներն են այսօր իրենք՝ նոր սերունդը:

ԲԱՆՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Մայք եւ Նայիրի Գագանճեան բախտաւորուած են աղջիկ գաւակով մը, որ անուանած են Քայլա:

Մեր ջերմ շնորհաւորութիւնները ընտանեկան պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Գայլուտ եւ Լենա Տէրտէրեաններուն: «Մասիս»

ԲԱՆՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Մայք եւ Նայիրի Գագանճեաններուն առջինեկ աղջիկ գաւակով մը բախտաւորուելուն ուրախ առթիւ Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը եւ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմինը կը շնորհաւորեն նորածին ընտանեկան պարագաները, յատկապէս մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Գայլուտ եւ Լենա Տէրտէրեաններուն: Այս ուրախ առթիւ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ԲԱՆՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Ալէն եւ Անի Սէմէրճեաններ բախտաւորուած են առջինեկ մանչ գաւակով մը, որ անուանած են Վիգէն: Այս առթիւ կը շնորհաւորենք նորածին ընտանեկան պարագաները, յատկապէս մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Ընկեր Ժիրայր եւ Սիւզան Պոյաճեանները: «Մասիս»

ՇՆՈՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մի ոմն քաջալերուելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութենէն \$50 տոլար կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.*



Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School



**THE QUALITY AND SAFE ALTERNATIVE
FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION**

Registration in Progress 2007-2008 Academic Year Grades 9-12

*Experienced & Caring Faculty
College Preparatory Programs*

AGBU HIGH SCHOOL - PASADENA
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

*For more information, campus tour
and a meeting with the Principal,
please call 626-794-0363.*

DINNER DANCE AND AWARDS CEREMONY

Organized By

AGBU PASADENA GLENDALE CHAPTER
SPORTS COMMITTEE

SATURDAY, JUNE 2, 2007 - 8:00 PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. Mountain Street
Pasadena, CA 91104

Entertainment

SOGHOMONIAN BAND

Featuring

TAVIT SAMUELIAN

Awards presented to
1st, 2nd, 3rd Place Winners

**Funds Raised Will Benefit
Pasadena Glendale Chapter's
Athletic Programs**

Donation: \$50
Athletes and Children under 12: Free

For tickets please call
the AGBU offices at (626) 794-7942

AGBU GLENDALE / PASADENA CHAPTER

Y O G A Y O G A Y O G A Y O G A Y O G A Y O G A

COME JOIN US IN A FUN CLASS GUARANTEED TO CHALLENGE YOUR MIND AND BODY!

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.

Yoga is neither a religion nor simply a "workout".

LIMITED SPACES

For Information of reservations please call A.G.B.U. office (626) 794-7942

AGBU CENTENNIAL SPONSORS



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

